Գործ ՍԴ/0072/01/10

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Նախագահող դատավոր՝ Լեռնիկ Աթանյան

քարտուղարությամբ՝ Սուսաննա Կարապետյանի

մասնակցությամբ՝ մեղադրող Արամ Ամիրզադյանի

պաշտպան՝ Կարեն Քամալյանի, Մարտին Զիլֆուղարյանի

տուժողի ներկայացուցիչ՝ Տիգրան Խաչատրյանի

2010թ. օգոստոսի 10-ին, Գորիս քաղաքում, դռնբաց դատական նիստում, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի Հովիկ Ասատուրի Բախշյանի, ծնված 30.11.1957թ. Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի,ամուսնացած, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի նախկին կառավարիչ, նախկինում չդատված, հաշվառված է ք.Գորիս,Գուսան Աշոտի փողոց, շենք 20, բնակարան 3, բն. Սյունիքի մարզ, գյուղ Շինուհայր: Սույն գործով կալանքի տակ է 11.05.2009թ.:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:
Ալինա Դաֆիկի Սարգսյանի, ծնված 20.06.1959թ., Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, ամուսնացած, բարձրագույն կրթությամբ, "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, նախկինում չդատված, բն. ք. Գորիս, Անկախության 2/23: Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով:
Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի, ծնված 01.01.1951թ., Գորիսի շրջանի Քարաշեն գյուղում, ազգությամբ հայ, « քաղաքացի, ամուսնացած, խնամքին 2 անձ,բարձրագույն

կրթությամբ, չի աշխատում, նախկինում չդատված, բնակվում է ք. Գորիս, Գուսան Աշոտի 20/3:
Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով: Արշակ Արտակի Բալույանի, ծնված 26.08.1985թ., Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում, ազգությամբ հայ, « քաղաքացի, ամուրի, բարձրագույն կրթությամբ,խնամքին ոչ ոք, "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ, նախկինում չտադված, բնակվում է Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում: Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով: Գայանե ժորայի Ղազարյանի, ծնված 19.01.1965թ., Գորիս քաղաքում, ազգությամբ հայ, « քաղաքացի,ամուսնացած, խնամքին երկու երեխաները, բարձրագույն կրթությամբ, "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի հաշվապահության մասնագետ, նախկինում չդատված, բնակվում էք. Գորիս, Վանքի Տափ 4/9: Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով: Անահիտ Արսենի Թորոսյանի, ծնված 26.04.1954թ., Գորիս քաղաքում, ազգությամբ հայ, « քաղաքացի, ամուսացած, խնամքին ոչ ոք, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի ավագ գանձապահ, նախկինում չդատված, բնակվում է ք. Գորիս, Սալ Քարի 6/5: Սույն գործով կալանքի տակ չի եղել:
Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով: Նազիկ Դերենիկի Մաթևոսյանի, ծնված 27.08.1969թ., Գորիս քաղաքում, ազգությամբ հայ, « քաղաքացի, ամուսնացած, խնամքին մինչև 14 տարեկան երեք երեխա, բարձրագույն կրթությամբ, չի աշխատում, նախկինում չդատված, հաշվառված է ք. Գորիս, Սյունիքի 125, բնակվում էք. Երևան, էրեբունու փողոց, շենք 21/1, բնակարան 11: Սույն գործով կալանքի տակ չի եղել:

Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ն կետով:

1.Գործի դատավարական նախապատմությունը.

«ԿԱ ԱԱԾ քննչական վարչության կողմից 11.05.2009թ. հարուցվել է թիվ 61201809 քրեական գործը:
Նախաքննության մարմնի կողմից 14.05.2009թ. Հովիկ Ասատուրի Բախշյանին մեղադրանք է առաջադրվել « քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը 18.03.2010թ. փոփոխվել և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ, ընկերության կողմից մասնաճյուղից հատկացված վարկային միջոցները հափշտակելու և անձնական նպատակների համար տնօրինելու դիտավորությամբ, 2006թ. նոյեմբերի 29-ից 2008 թվականի սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում 95 անձանց և նրա կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ պատրաստել է անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների

ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ, որոնք տրամադրելով մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետներ՝ Ազնիվ Առաքելյանին և Արշակ Բալույանին, հանձնարարել է դրանցով կազմել կեղծ վարկային գործեր և ներկայացնել հաշվապահությանը՝ վարկային միջոցների ելքագրումը ձևակերպելու նպատակով: Վերջիններս նրան հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու շահագրգռվածությունից ելնելով, կատարել են հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում կազմել 96 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար, որը տնօրինելով իր հայեցողությամբ,օգտագործել է իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կարիքների համար: Նպատակ ունենալով թաքցնել հափշտակված գումարի ծագման աղբյուրը և խուսափել կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, նույն ժամանակահատվածում մասնաճյուղի գլխավոր հաշվապահի և գանձապահի օժանդակությամբ, "վարկառուների" անունից սպասարկել է կեղծ վարկերը, մարելով դրանց ամենամսյա գումարներն ու տոկոսները՝ ընդհանուր առմամբ վարկային գումարների մասով մուտքագրելով 232.564.938.55 դրամ և տոկոսագումարների մասով՝ 127.041.561.87 դրամ գումար, ընդհանուր՝ 359.606.500,42 դրամ գումար: Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում, նույն Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ, իրավաբանական անձանց սպասարկումն իրականացնող Գայանե Ղազարյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ, մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի կեղծ մեմորիալ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ստացել և հափշտակել է ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը ստացել է "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր-95" ընկերության, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17 մլն,18 մլն և 18 մլն դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, 2009թ. հունվարի 14-ին և մարտի 9-ից 25-ն ընկած ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, նույն "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել է փոխանցումներ նույն բանկում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն. դրամ, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարին, բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների:

Հափշտակության փաստը թաքցնելու, քողարկելու, հափշտակության արդյունքում "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարի գումարը պակաս լինելու հետևանքով նշված ընկերության ներկայացրած 143 մլն. դրամի փոխանցման հանձնարարագիրը

կատարելու նպատակով 2009թվականի մարտի 31-ին իր կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ընկերությունների անվամբ, առանց բանկի գլխամասի թույլտվության ձևակերպել է ընդհանուր 245 մլն դրամի երկու կեղծ վարկեր, որոնց գումարից 137 մլն. դրամն առանց ստորագրության, կեղծ օրդերներով մուտքագրել է "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարին, 257.000 դրամը մուտքագրվել է բանկ, որպես վարկային գումարի մարում, իսկ մնացածը տնօրինել այլ նպատակներով: Փաստորեն, Հովիկ Բախշյանի կողմից նշված կեղծ վարկերի ձևակերպումները կրել են պարբերական բնույթ, վարկերի գումարները ձևակերպվել, ելքագրվել և յուրացվել են, ինչպես նրա կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար օգտագործելու, այնպես էլ կեղծ վարկերը և դրանց տոկոսները մարելու նպատակով, որպիսի գործողություններով Հովիկ Բախշյանը թաքցրել, խեղաթյուրել է նախկինում հափշտակած առանձնապես խոշոր չափերի գումարների իրական բնույթը, ծագման աղբյուրները, տեղաշարժը, այսինքն՝ օրինականացրել հանցավոր ճանապարհով ստացած եկամուտները, որի արդյունքում "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ պատճառվել է 693.808.812,70 մլն դրամ գումարի գույքային վնաս,այսինքն՝ առանձնապես խոշոր չափերի 918.786.604 դրամ գումար յուրացնելու և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն՝ առանձնապես խոշոր չափերի 496.863.500,42 դրամ գումարն օրինականացնելու /լվանալու/ մեջ: 19.03.2010թ. Ալինա Ռաֆիկի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ՝ 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվելով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումները ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում հաշվապահության մասնագետ Գայանե

Ղազարյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին, մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն . դրամ, ընդ որում դրանից 53 մլն. դրամը՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր 95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ր և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր 95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների: Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել է կառավարիչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և ապահովել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 918,786,604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

20.03.2010թ. Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել« քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ և մասնաճյուղի կառավարիչ՝ Հովիկ Բախշյանի բարեկամ, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները վերջինիս կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ և հանձնարարություն՝ դրանցով կեղծ վարկային գործեր կազմելու և դրանց հիման վրա վարկայինմիջոցների ելքագրումը հաշվապահության միջոցով ձևակերպելու նպատակով Հովիկ Բախշյանին հաճոյանալու և բարեկամական մտերիմ հարաբերություններ պահպանելու անձնական

շահագրգռվածությունից ելնելով, կատարել է կառավարչի հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում, իսկ 2007թ. սեպտեմբերից նաև վարկային բաժնի մյուս մասնագետ՝ Արշակ Բալույանի հետ միասին կազմել 96 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 673.786.604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:
19.03.2010թ. Արշակ Արտակի Բալույանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա 2007թ. սեպտեմբերի 12-ից հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2007թ. հոկտեմբերից 2008թ. սեպտեմբերի 1-ից սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով 58 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ պատրաստված անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ և հանձնարարություն՝ դրանցով կեղծ վարկային գործեր կազմելու և վարկային միջոցների ելքագրումը ձևակերպելու նպատակով մասնաճյուղի հաշվապահությանը ներկայացնելու համար Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի վարկային բաժնի մյուս մասնագետ Ազնիվ Առաքելյանի հետ միասին կատարել է կառավարչի հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում կազմել 59 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 435.220.000 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար: Բացի այդ, որպես վարկային բաժնի մասնագետ շարունակելով աշխատանքային գործառույթների կատարումը, 2009թ. ապրիլի մեկին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների նախորդ օրվա 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ գումարի վարկային պայմանագրեր բացելու վերաբերյալ և քաջատեղյակ լինելով, որ նշված վարկերի տրամադրման համար համապատասխան թույլտվություն չի ստացվել ընկերության վարչությունից և խորհրդից կատարել է հանցավոր կարգադրությունը և նշված

ամսաթվով բացել երկու կեղծ պայմանագրեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը, նույն գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահ՝ Անահիտ Թորոսյանի օժանդակությամբ կանխիկացրել է գումարը և յուրացրել, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 680,220.000 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

19.03.2010թ. Գայանե Ժորայի Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի հաշվապահության մասնագետ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ.սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումն ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով, առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ու ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում անձնական կարիքների համար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը՝ "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի

արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների: Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել է կառավարիչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և ապահովել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 918,786,604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

19.03.2010թ. Անահիտ Արսենի Թորոսյանին մեղադրանք է առաջադրվել « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի ավագ գանձապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ.սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 78 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումը ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 551.598.046,8 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ մասնաճյուղի հաճախորդ՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվից ելքի դրամարկղային կեղծ

օրդերներով ընդհանուր 137 մլն դրամ գումարի ելքագրումն ու վերջինիս կողմից յուրացումը քողարկելու նպատակով, 2009թ. մարտի 9-ից 25-ն ընկած ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին, "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ՀՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և փոխանցման կեղծ հանձնարարագրերով փոխանցել "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին:

Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊ և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել է կառավարչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և կատարել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 796.598.046,8 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

20.03.2010թ. Նազիկ Դերենիկի Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի ավագ գանձապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 17 անձանց անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումը ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, իսկ 6 վարկային գործերի դեպքում հիփոթեքի վարկերով ելքագրումներ իրականացնելու նպատակով՝ նաև

որպես "կանխավճար մուտքագրված" մուտքի դրամարկղային կեղծ օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 122.188.557,2 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:
Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին, մասնաճյուղի հաճախորդ "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարից մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին, համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 259.188.557,2 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ: Հովիկ Ասատուրի Բախշյանը ձերբակալվել է 11.05.2009թ.:
Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.05.2009թ. որոշմամբ Հովիկ Ասատուրի Բախշյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով: 19.03.2010թ. Ալինա Ռաֆիկի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:
19.03.2010թ. Արշակ Արտակի Բալույանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:
19.03.2010թ. Գայանե Ժորայի Ղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:
19.03.2010թ. Անահիտ Արսենի Թորոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:
20.03.2010թ. Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:
20.03.2010թ. Նազիկ Ղերենիկի Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Գործը մեղադրական եզրակացությամբ 31.03.2010թ. ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2.Ապացույցների հետազոտում և գնահատում

Գնահատելով հետազոտված ապացույցները և գործի նյութերն իրենց համակցությամբ, դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Հովիկ Ասատուրի Բախշյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ, ընկերության կողմից մասնաճյուղից հատկացված վարկային միջոցները հափշտակելու և անձնական նպատակների համար տնօրինելու դիտավորությամբ, 2006թ. նոյեմբերի 29-ից 2008 թվականի սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում 95 անձանց և նրա կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ պատրաստել է անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ, որոնք տրամադրելով մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետներ՝ Ազնիվ Առաքելյանին և Արշակ Բալույանին, հանձնարարել է դրանցով կազմել կեղծ վարկային գործեր և ներկայացնել հաշվապահությանը՝ վարկային միջոցների ելքագրումը ձևակերպելու նպատակով: Վերջիններս նրան հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու շահագրգռվածությունից ելնելով, կատարել են հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում կազմել 96 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար, որը տնօրինելով իր հայեցողությամբ,օգտագործել է իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կարիքների համար:
Նպատակ ունենալով թաքցնել հափշտակված գումարի ծագման աղբյուրը և խուսափել կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, նույն ժամանակահատվածում մասնաճյուղի գլխավոր հաշվապահի և գանձապահի օժանդակությամբ, "վարկառուների" անունից սպասարկել է կեղծ վարկերը, մարելով դրանց ամենամսյա գումարներն ու տոկոսները՝ ընդհանուր առմամբ վարկային գումարների մասով մուտքագրելով 232.564.938.55 դրամ և տոկոսագումարների մասով՝ 127.041.561.87 դրամ գումար, ընդհանուր՝ 359.606.500,42 դրամ գումար: Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում, նույն Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ, իրավաբանական անձանց սպասարկումն իրականացնող Գայանե Ղազարյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ, մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի կեղծ մեմորիալ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ստացել

և հափշտակել է ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը ստացել է "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր-95" ընկերության, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17 մլն,18 մլն և 18 մլն դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, 2009թ. հունվարի
14-ին և մարտի 9-ից 25-ն ընկած ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, նույն "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել է փոխանցումներ նույն բանկում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն. դրամ, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարին, բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների:
Հափշտակության փաստը թաքցնելու, քողարկելու, հափշտակության արդյունքում "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարի գումարը պակաս լինելու հետևանքով նշված ընկերության ներկայացրած 143 մլն. դրամի փոխանցման հանձնարարագիրը կատարելու նպատակով 2009թվականի մարտի 31-ին իր կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ընկերությունների անվամբ, առանց բանկի գլխամասի թույլտվության ձևակերպել է ընդհանուր 245 մլն դրամի երկու կեղծ վարկեր, որոնց գումարից 137 մլն. դրամն առանց ստորագրության, կեղծ օրդերներով մուտքագրել է "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարին, 257.000 դրամը մուտքագրվել է բանկ, որպես վարկային գումարի մարում, իսկ մնացածը տնօրինել այլ նպատակներով: Փաստորեն, Հովիկ Բախշյանի կողմից նշված կեղծ վարկերի ձևակերպումները կրել են պարբերական բնույթ, վարկերի գումարները ձևակերպվել, ելքագրվել և յուրացվել են, ինչպես նրա կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար օգտագործելու, այնպես էլ կեղծ վարկերը և դրանց տոկոսները մարելու նպատակով, որպիսի գործողություններով Հովիկ Բախշյանը թաքցրել, խեղաթյուրել է նախկինում հափշտակած առանձնապես խոշոր չափերի գումարների իրական բնույթը, ծագման աղբյուրները, տեղաշարժը, այսինքն՝ օրինականացրել հանցավոր ճանապարհով ստացած եկամուտները, որի արդյունքում "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ պատճառվել է 693.808.812,70 մլն դրամ գումարի գույքային վնաս,այսինքն՝ առանձնապես խոշոր չափերի 918.786.604 դրամ գումար յուրացնելու և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն՝ առանձնապես խոշոր չափերի 496.863.500,42 դրամ գումարն օրինականացնելու /լվանալու/ մեջ: Ամբաստանյալ Ալինա Ռաֆիկի Սարգսյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ՝ 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվելով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ

վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումները ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:
Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին, մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն . դրամ, ընդ որում դրանից 53 մլն. դրամը՝ "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր 95" ՍՊԸ-ի, "ԷՅԾ" ԲԲԸ-ր և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր 95" ՍՊԸ-ի, "ԷՅԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների: Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել Է կառավարիչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և ապահովել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից

առանձնապես խոշոր չափերի 918,786,604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:
Ամբաստանյալ Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ և մասնաճյուղի կառավարիչ՝ Հովիկ Բախշյանի բարեկամ, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միոցները վերջինիս կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ և հանձնարարություն՝ դրանցով կեղծ վարկային գործեր կազմելու և դրանց հիման վրա վարկայինմիջոցների ելքագրումը հաշվապահության միջոցով ձևակերպելու նպատակով Հովիկ Բախշյանին հաճոյանալու և բարեկամական մտերիմ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, կատարել է կառավարչի հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում, իսկ 2007թ. սեպտեմբերից նաև վարկային բաժնի մյուս մասնագետ՝ Արշակ Բալույանի հետ միասին կազմել 96 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 673.786.604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:
Ամբաստանյալ Արշակ Արտակի Բալույանը 2007թ. սեպտեմբերի 12-ից հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2007թ. հոկտեմբերից 2008թ. սեպտեմբերի 1 սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով 58 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ պատրաստված անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրեր, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներ, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներ և հանձնարարություն՝ դրանցով կեղծ վարկային գործեր կազմելու և վարկային միջոցների ելքագրումը ձևակերպելու նպատակով մասնաճյուղի հաշվապահությանը ներկայացնելու համար Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի վարկային բաժնի մյուս մասնագետ Ազնիվ Առաքելյանի հետ միասին կատարել է կառավարչի հանձնարարությունը և նշված ժամանակահատվածում կազմել 59 կեղծ վարկային գործեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի,

հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ կանխիկ կարգով ստանալով ձևակերպված վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 435.220.000 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար– Բացի այդ, որպես վարկային բաժնի մասնագետ շարունակելով աշխատանքային գործառույթների կատարումը, 2009թ. ապրիլի մեկին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների նախորդ օրվա 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ գումարի վարկային պայմանագրեր բացելու վերաբերյալ և քաջատեղյակ լինելով, որ նշված վարկերի տրամադրման համար համապատասխան թույլտվություն չի ստացվել ընկերության վարչությունից և խորհրդից կատարել է հանցավոր կարգադրությունը և նշված ամսաթվով բացել երկու կեղծ պայմանագրեր, որոնց միջոցով Հովիկ Բախշյանը, նույն գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի, հաշվապահության մասնագետ՝ Գայանե Ղազարյանի և գանձապահ՝ Անահիտ Թորոսյանի օժանդակությամբ կանխիկացրել է գումարը և յուրացրել, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 680,220.000 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

Ամբաստանյալ Գայանե Ժորայի Ղազարյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի հաշվապահության մասնագետ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հաձշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ.սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումն ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և գանձապահներ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով, առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ու ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկաերի գումարները նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 673.786.604 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում անձնական կարիքների համար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի

և գանձապահներ՝ Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի հետ միասին մասնաճյուղի հաճախորդ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը՝ "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից նույն բանկում սպասարկվող՝ "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների: Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել է կառավարիչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և ապահովել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 918,786,604 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

Ամբաստանյալ Անահիտ Արսենի Թորոսյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի ավագ գանձապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ.սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 78 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվով "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումը ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական

շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 551.598.046,8 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ մասնաճյուղի հաճախորդ՝ "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվից ելքի դրամարկղային կեղծ օրդերներով ընդհանուր 137 մլն դրամ գումարի ելքագրումն ու վերջինիս կողմից յուրացումը քողարկելու նպատակով, 2009թ. մարտի 9-ից 25-ն ընկած ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին, "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ՀՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և փոխանցման կեղծ հանձնարարագրերով փոխանցել "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին:

Այնուհետև, 2009թ. մարտի 31-ին մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանից ստանալով ակնհայտ ապօրինի կարգադրություն՝ առանց փաստաթղթային որևէ հիմքերի և սահմանված կարգով բացված վարկային պայմանագրերի վերջինիս կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊ և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով համապատասխանաբար 125 մլն դրամ և 120 մլն դրամ վարկային գումարներ ելքագրելու և կանխիկացնելու վերաբերյալ, կատարել է կառավարչի հանցավոր կարգադրությունը, ստորագրությամբ վավերացրել նշված գումարների ելքի դրամարկղային օրդերները և կատարել գումարի ելքագրումը, որից 137 մլն դրամը նույն կարգով մուտքագրել է "Որոտան ՀԷԿՀ" ՓԲԸ-ի հաշվեհամարին, իսկ մնացածը տնօրինվել Հովիկ Բախշյանի կողմից, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 796.598.046,8 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ:

Ամբաստանյալ Նազիկ Դերենիկի Մաթևոսյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի "Գորիս" մասնաճյուղի ավագ գանձապահ և գործելով իր աշխատանքային գործառույթների շրջանակներում, ընկերության կողմից մասնաճյուղին հատկացված վարկային միջոցները մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կողմից հափշտակելու և անձնական կարիքների համար տնօրինելու նպատակով 2006թ. նոյեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում նրանից ստանալով կարգադրություններ 17 անձանց անվամբ՝ անշարժ գույքի սեփականության կեղծ վկայագրերով, տրանսպորտային միջոցների ժամանակավոր գրանցման կեղծ վկայականներով, "վարկառուների" աշխատավարձերի և եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման վերաբերյալ կեղծ տեղեկանքներով, մասնաճյուղի

վարկային բաժնի մասնագետների կողմից կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների ելքագրումը ձևակերպելու և կանխիկ իրեն տրամադրելու վերաբերյալ, Հովիկ Բախշյանին հաճոյանալու և լավ հարաբերություններ պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին ստորագրությամբ վավերացնելով առանց հաճախորդների ներկայության և ստորագրության կազմված ելքի դրամարկղային օրդերները, իսկ 6 վարկային գործերի դեպքում հիփոթեքի վարկերով ելքագրումներ իրականացնելու նպատակով՝ նաև որպես "կանխավճար մուտքագրված" մուտքի դրամարկղային կեղծ օրդերները, ապահովել է վարկային գումարների ելքագրումն ու կանխիկ տրամադրումը Հովիկ Բախշյանին, որը ստանալով ձևակերպված կեղծ վարկերի գումարները, նշված ժամանակահատվածում հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 122.188.557,2 դրամ գումար և օգտագործել իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության ընթացքում և անձնական կարիքների համար:
Շարունակելով հանցավոր գործունեությունը, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում գլխավոր հաշվապահ Ալինա Սարգսյանի և հաշվապահության մասնագետ Գայանե Ղազարյանի հետ միասին, մասնաճյուղի հաճախորդ "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից առանց ստորագրման և կնիքի ելքի դրամարկղային կեղծ օրդերների և վճարային հանձնարարագրերի միջոցով ելքագրել և Հովիկ Բախշյանին են տրամադրել ևս 137 մլն դրամ, ընդ որում դրանից 53 մլն դրամը՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ հաշվեհամարից մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի հաշվեհամարներին, համապատասխանաբար 17մլն., 18մլն և 18մլն. դրամ փոխանցելու և կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկացնելու միջոցով, ինչը քողարկելու նպատակով, նույն Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, նույն ժամանակահատվածում, եռամսյակի ոչ տոկոսային եկամուտների բանկի պլանն ապահովելու պատրվակով, "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարից կեղծ փոխանցման հանձնարարագրերով կատարել են փոխանցումներ մասնաճյուղում սպասարկվող "Զանգեզուր-95" ՍՊԸ-ի, "ԷՑԾ" ԲԲԸ-ի և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի արտադրական հաշվեհամարներին, յուրաքանչյուր դեպքով 17-18 մլն դրամի չափով, որոնք կանխիկացրել և մի քանի օրից կեղծ մուտքի օրդերներով մուտքագրել են նշված երեք կազմակերպությունների հաշվեհամարներին և կեղծ փոխանցման հանձնարարագրերով փոխանցել "Որոտան ՀԷԿ" ՓԲԸ-ի հաշվեհամարին բացառությամբ վերը նշված ընդհանուր 53 մլն դրամ գումարի գործարքների, այսինքն Հովիկ Բախշյանի կողմից առանձնապես խոշոր չափերի 259.188.557,2 դրամ գումար յուրացնելուն օժանդակելու մեջ: Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Հովիկ Ասատուրի Բախշյանն իրեն մեղավոր չի ճանաչել ցուցմունք է տվել, համաձայն որի 2003 թվականից մինչև 2009 թվականի ապրիլ ամիսը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ և միաժամանակ նաև "Պայծառ ապագա" ՍՊ և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների սեփականատեր, ընկերություններով պարբերաբար շահել է տարբեր էներգետիկ և քաղաքացիական ոլորտների շինարարության մրցույթներ և 2006 թվականի ընթացքում իրականացված մի քանի շինարարական գործերով կրել է մեծ վնասներ, կապված շինանյութի և վառելիքի գների կտրուկ բարձրացման հետ, որոնք նախատեսված չեն եղել մրցույթային պայմանագրերով և համապատասխանաբար նաև՝

դրանց իրականացման հաշվարկներով: Ուստի մրցույթային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտություն է առաջացել վարկային ռեսուրսներ ստանալու և շինարարական օբյակտներն ավարտին հասցնելու նպատակով, հույսով, որ հետագա մրցույթներով շահած նմանատիպ կամ ավելի մեծածավալ շինարարական օբյեկտների շինարարությամբ ստացված եկամուտներով կփակի բոլոր վարկերը: Սակայն այդ ընթացքում շինարարական մրցույթներ չեն հայտարարվել, իսկ արդեն իսկ վերցված վարկերը սպասարկելու համար դիմել է նոր կեղծ վարկային գործերի ձևակերպմանն ու դրանց գումարների տնօրինմանը, որով ապահովել է վարկերի ժամանակին սպասարկումը, մինչև ձերբակալման օրը չունենալով որևէ ժամկետանց վարկեր, այդ թվում նաև մարելով այլ անձանց ժամկետանց պարտավորությունները

Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Ալինա Ո-աֆիկի Սարգսյանն ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք է տվել, համաձայն որի 2003 թվականից հանդիսանում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի գլխավոր հաշվապահ: Աշխատանքային պարտականությունների մեջ մտնում է՝ հաշվապահական հաշվառման ընդհանուր հսկողությունը, հաշվետվությունների կազմման և ներկայացման աշխատանքների կազմակերպումը: 2003 թվականից մինչև 2009 թվականի մայիս ամիսը մասնաճյուղի կառավարիչ հանդիսացել է Հովիկ Բախշյանը, որի կողմից մշտապես թույլ են տրվել բազմաթիվ չարաշահումներ, կապված այլ անձանց անվամբ ձևակերպված կեղծ վարկերի գումարների տնօրինման հետ, սակայն դրանք չեն գերազանցել գլխամասի կողմից մասնաճյուղերի համար սահմանված վարկերի չափերի սահմանափակումները և ժամանակին մարվել են, ուստի մինչև 2006 թվականի վերջն այդ առումով իրավիճակը վերահսկելի է եղել: Սակայն սկսած 2006 թվականի վերջից Հովիկ Բախշյանի խիստ կարգադրությամբ և պահանջով ձևակերպվել են բազմաթիվ կեղծ վարկեր, նույնիսկ խախտելով գլխամասի կողմից մասնաճյուղերի համար սահմանված վարկերի չափերի սահմանափակումները, որոնց կապակցությամբ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության ներքին վերահսկողության վարչության մասնագետների կողմից մասնաճյուղում իրականացվել են բազմաթիվ աուդիտներ և թեմատիկ ստուգումներ, որոնց ընթացքում վերջիններիս կողմից բացահայտվել են Հովիկ Բախշյանի կողմից կատարված բազմաթիվ խախտումներ և չարաշահումներ, սակայն ամեն ինչ վերջացել է մեղմ պատժամիջոցներով: Այդ հանգամանքից ելնելով, Հովիկ Բախշյանը շարունակել է իր անօրինական գործելաոճը և ապօրինի կարգադրություններով, գոռոցներով և ճնշումներ գործադրելով իր և մյուս աշխատակիցների նկատմամբ, սպառնալով, որ կազատի աշխատանքից, ստիպել է կատարելու անօրինական կարգադրությունները՝ կատարել անհիմն և կեղծ գործարքները: Ինքն ենթարկվել է կառավարիչի կարգադրություններին, տուրք տալով նրա սպառնալիքներին ու ճնշումներին, քանի որ կորցնելով աշխատատեղը, ծանր կացության մեջ կդներ իր ընտանիքը, որի գոյությունը պահում է աշխատավարձի շնորհիվ: Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, վերջինիս կողմից տարբեր անձանց տվյալներով տրամադրված կեղծ փաստաթղթերով, առանց վերջիններիս գիտության, վարկային բաժնի մասնագետների կողմից կազմվել են կեղծ վարկային գործեր, որոնց հիման վրա նույն անձանց տվյալներով բացված հաշիվներին մուտքագրվել և

միանգամից ելքագրվել ու Հովիկ Բախշյանին կանխիկ տրամադրվել են վարկային գումարներ, որոնք տնօրինվել են վերջինիս կողմից: Նույն կարգով կատարվել են նաև բանկի հաճախորդներ հանդիսացող՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲ ընկերության, "Գորիսի ԷՑԸ" ԲԲ ընկերության "Զանգեզուր-95" և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվների հաշվեհամարներից, առանց վերջիններիս ղեկավարների կամ լիազորված անձանց ներկայության և սահմանված կարգով վավերացման, 2009 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում գումարների ելքագրման կամ մուտքագրման գործարքները, որոնք նույնպես կատարվել են Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, որին էլ հանձնվել է յուրաքանչյուր ելքագրված գումարը: Նշված ընկերություններին տրվող հաշվի շարժի քաղվածքները այդ ժամանակահատվածում կազմվել են Հովիկ Բախշյանի կողմից, որոնցում արտացոլված չեն եղել նշված կեղծ գործարքները, և վերջինիս կարգադրությամբ դրանք հաշվապահության մասնագետ՝ 9-այանե Ղազարյանի կողմից տրամադրվել են ընկերությունների լիազորված անձանց: Ինքը, Գայանե Ղազարյանն ու բանկի ավագ գանձապահ՝ Անահիտ Թորոսյանը մշտապես ընդդիմացել են Հովիկ Բախշյանի անօրինական կարգադրություններին, սակայն ի վերջո ենթարկվել են նրա պահանջներին, չցանկանալով կորցնել աշխատանքը:

Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանն ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր է ճանաչել « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք է տվել, համաձայն որի 2004 թվականից մինչև 2008 թվականի սեպտեմբերի 8-ն աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որպես վարկային բաժնի մասնագետ: Աշխատանքային պարտականությունների մեջ մտել է՝ բանկի միջոցով ապրանքների ապառիկ կարգով ձեռք բերման վարկային գործերի կազմումը, դրանց հետագա սպասարկման վերահսկողության իրականացումը և այլ վարկային խնդիրների կարգավորումը: Նշված ժամանակահատվածում մասնաճյուղի կառավարիչ հանդիսացել է Հովիկ Բախշյանը, որն իր կնոջ քրոջ ամուսինն է: Քանի որ համակարգչին չի տիրապետում, ապա սկզբնական ժամանակաշրջանում պայմանագրերը Հովիկ Բախշյանի կարգադրությամբ և նրա կողմից տրամադրած ելակետային տվյալներով տպագրվել են կամ բանկի մյուս աշխատակիցների, կամ էլ բանկում այդ ընթացքում փորձաշրջան անցնող ստաժորների կողմից, իսկ Արշակ Բալույանին վարկային բաժնի մասնագետի պաշտոնում նշանակելուց հետո՝ 2007 թվականի սեպտեմբերից՝ վերջինիս կողմից: 2006-2008 թվականների ընթացքում Հովիկ Բախշյանի կարգադրությամբ և վերջինիս կողմից տրամադրած ելակետային տվյալների ու փաստաթղթերի՝ վարկառուի անձնագրի պատճենի, անշարժ գույքի սեփականության վկայագրի կամ տրանսպորտային միջոցի գրանցման վկայականի պատճենների, գնահատման ակտերի, եկամուտների և հաշվառման վայրի վերաբերյալ տեղեկանքների հիման վրա կատարվել են բազմաթիվ վարկային գործերի կազմման և դրանց գումարների ելքագրման գործողություններ, որոնց ընթացքում նշված ելակետային տվյալներով Արշակ Բալույանի, իսկ մինչ նրա աշխատանքի ընդունվելը՝ բանկում այդ ժամանակահատվածում փորձաշրջան անցնող տարբեր անձանց կողմից տպագրվել են վարկային և գրավի պայմանագրեր, որից հետո Հովիկ Բախշյանի կարգադրությամբ ինքը վարկառուի անունից կազմել է վարկ ստանալու վերաբերյալ դիմում, ստորագրել

այն, կցել գործին և առանց վարկառուի ներկայության և ստորագրության վարկային գործը հանձնել Հովիկ Բախշյանին: Թե վարկառուի փոխարեն պայմանագրերում և վարկ ստանալու վերաբերյալ դիմումում ո՞վ է ստորագրել, որևէ տեղեկություն չունի, միայն այդ բոլոր հանգամանքները ցույց են տվել, որ վարկային գործերը կեղծ են եղել, կրել են ֆորմալ բնույթ և անհրաժեշտ են եղել Հովիկ Բախշյանին միայն այդ վարկային գումարները ստանալու և օգտագործելու համար: Բազմիցս արտահայտել է իր բացասական կարծիքն այդ ամենի վերաբերյալ, մինչ իրեն ազատելն երկու անգամ աշխատանքից ազատման դիմում է գրել, սակայն ամեն անգամ Հովիկ Բախշյանը, պատճառաբանելով, որ իր ընկերություններով շինարարական տենդերներ կշահի և դրանց եկամուտով միանգամից կփակի բոլոր վարկերը, համոզել է վերադառնալ աշխատանքի և շարունակել նույն գործերը: Այդ ժամանակահատվածում "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության համապատասխան մասնագետների կողմից մասնաճյուղում իրականացվել են բազմաթիվ ստուգումներ, որոնց ընթացքում բացահայտվել են խախտումներ և թերություններ, որոնց արդյունքում ընկերության վարչության որոշման հիման վրա 2008 թվականի սեպտեմբերի 8-ին իրեն ազատել են աշխատանքից:

Այդ գործողությունների կատարման համար որևէ շահադիտական, անձնական կամ այլ շահագրգռվածություն չի ունեցել, առավել ևս՝ Հովիկ Բախշյանին հաճոյանալու անհրաժեշտություն կամ միտում, քանի որ նման կարիք երբեք չի ունեցել և չի զգացել, հետևաբար նաև չի ունեցել յուրացմանն օժանդակելու միտում:

Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Արշակ Արտակի Բալույա « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր է ճանաչել « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք է տվել, համաձայն որի 2007 թվականի սեպտեմբերից աշխատում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որպես վարկային բաժնի մասնագետ: Աշխատանքային պարտականությունների մեջ մտել է՝ վարկային հայտերի ընդունում, ուսումնասիրություն, վարկային փաթեթների կազմում և վարկերի հետագա սպասարկման մոնիտորինգի իրականացում: Մինչև 2008 թվականի սեպտեմբեր ամիսը վարկային բաժնում աշխատել է մյուս մասնագետ՝ Ազնիվ Առաքելյանի հետ միասին և կառավարիչ՝ Հովիկ Բախշյանի կարգադրությամբ օգնել է Ազնիվ Առաքելյանին՝ համակարգչային տարբերակով տպագրելով վարկային և գրավի պայմանագրերը: Ինքը, թեև կատարել է իրեն մեղսագրվող փաստացի գործողությունները, սակայն չի գիտակցել դրանց լրջությունը և որ դա հանդիսանում է քրեորեն պատժելի արարք, չի հասկացել իր գործողությունների հետևանքները, դրանցում շահադիտական, անձնական կամ այլ շահագրգռվածություն չի ունեցել, կատարել է միայն կառավարիչի կարգադրությունները, որը հավաստիացրել է, որ իր կողմից կատարված գործողություններն ամենաշատը հանդիսանում են բանկի ներքին կանոնակարգերի խախտումներ, որոնց համար ինքն է պատասխանատու և դա իրենից վտանգ չի ներկայացնում: Իսկ երբ ընկերության ներքին վերահսկողության վարչության մասնագետների կողմից իրականացված մի շարք ստուգումների ընթացքում բազմաթիվ խախտումներ հայտնաբերելուց հետո Հովիկ Բախշյանը մնացել է պաշտոնում, ապա վերջինիս վերը նշված հայտարարություններն իրեն ճշմարիտ են թվացել և ավելի համոզել: Հովիկ Բախշյանն իրեն փորձաշրջան չի տրամադրել, բանկի

կանոնակարգերին և հրամաններին չի ծանոթացրել, առաջին իսկ օրվանից իրեն և վարկային բաժնի մասնագետ՝ Ազնիվ Առաքելյանին տրամադրելով իր իսկ կողմից հայթայթված փաստաթղթեր՝ սեփականության իրավունքի վկայագրերի, տրանսպորտային միջոցի ժամանակավոր գրանցման վկայականների, աշխատանքային, եկամուտների վերաբերյալ և այլ տեղեկանքների քսերոպատճենները, կարգադրել է դրանցում նշված ելակետային տվյալներով և իր կողմից նշված գումարի չափով բացել վարկային գործեր, համակարգչային տարբերակով կազմել վարկային և գրավի պայմանագրեր և գումարի ելքի համար կառավարիչի անունից հաշվապահություն ներկայացվող գրավոր կարգադրություններ, որոնք կատարվել են իր և Ազնիվ Առաքելյանի կողմից և տրամադրվել պատրաստված փաստաթղթերը, որից հետո Հովիկ Բախշյանը ստորագրելով կարգադրությունները, դրանք ներկայացրել է հաշվապահություն, որտեղ կատարել են գումարների ելքագրման ձևակերպումներ և գումարները կանխիկ տրամադրել են Հովիկ Բախշյանին: Սկզբնական շրջանում մտածել է, որ այդպես էլ պետք է լինի, այսինքն՝ կարգն է այդպես, քանի որ որևէ աշխատանքային փորձ չի ունեցել և տեղյակ չի եղել գործող կարգերի և կանոնակարգերի վերաբերյալ, իսկ որոշակի ժամանակ անց, շփվելով բանկում կազմվող այլ վարկային գործերի հետ, որոնք պատշաճ կարգով էին կատարվում, վարկային և գրավի պայմանագրերը ստանում էին նոտարական վավերացում, գրավի առարկան՝ կադաստրում պետական գրանցում, իսկ գրավի առարկայի սեփականության վկայագրերը պահվում էին բանկի բանկերում, ապա հասկացել է, որ Հովիկ Բախշյանի կողմից անմիջականորեն տրամադրվող փաստաթղթերի քսերոպատճեններով և նրա կողմից նշված գումարների չափերով կազմվող վարկային գործերն իրենց բնույթով կեղծ և շինծու են, որ այդ ամենը Հովիկ Բախշյանի կողմից կատարվում է վարկային գումարներ ելքագրելու և տնօրինելու նպատակով: Սակայն, իր համոզմամբ, վերջինս այդ գումարները վերցրել է ոչ թե յուրացնելու նպատակով, այլ ինչ-որ գործարքներ կատարելու և այնուհետև դրանք ամբողջությամբ վերադարձնելու նպատակով, ինչի մասին վկայում էր այն փաստը, որ նա մինչև ձերբակալման օրը պատշաճ կարգով սպասարկել է իր կողմից տնօրինված բոլոր վարկային գործերով պարտավորությունները: Բացի այդ, ինքը փորձել է ընդդիմանալ այդ գործելաոճին, սակայն Հովիկ Բախշյանը խիստ ձևով հայտարարել է, որ կամ այսպես աշխատում ես, կամ էլ աշխատողներ շատ կլինեն", սպառնալով իր կարգադրությունները չկատարելու դեպքում ազատել աշխատանքից: Քանի որ այլ աշխատանք չէր կարող ճարել, իսկ բանկում ստացած աշխատավարձը խիստ անհրաժեշտ էր ընտանիքի նյութական հոգսը թեթևացնելու և գոյությունը պահելու համար, ստիպված համաձայնել է շարունակել աշխատանքը և կատարել է Հովիկ Բախշյանի նշված կարգադրությունները: Ինչ վերաբերում է 31.03.2009թ. ամսաթվով "Պայծառ ապագա" ՍՊԸ անվամբ 125 մլն դրամ և "Բերրիություն" ԲԲԸ անվամբ 120 մլն դրամ վարկային միջոցների ելքագրմանը, ապա այդ վարկերի մասին իմացել է Հովիկ Բախշյանից հաջորդ օրը՝ 01.04.2009թ., երբ վերջինիս կողմից բանկի հաշվապահությանն արդեն իսկ ներկայացված է եղել նշված գումարների ելքագրման համար գրավոր կարգադրությունը, և որն իրեն կարգադրել է նախորդ օրվա ամսաթվով համակարգչային տարբերակով պատրաստել երկու վարկային պայմանագրեր, ինչը կատարել է և պայմանագրերը տրամադրել կառավարիչին:

Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Գայանե ժորայի Ղազարյանն ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին

կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք է տվել, համաձայն որի 2003 թվականից աշխատում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որպես հաշվապահության մասնագետ: Աշխատանքային պարտականությունների մեջ մտնում է՝

վարկավորման գործընթացի հաշվապահական ձևակերպումների կատարումն ու իրավաբանական անձանց հաշվապահական սպասարկումը:

95 անձանց և Հովիկ Բախշյանի կողմից փաստացի ղեկավարվող "Պայծառ ապագա" ՍՊԸ անվամբ մասնաճյուղում կազմված կեղծ վարկային գործերի վերաբերյալ որևէ տեղեկություն չի ունեցել և չէր կարող ունենալ, քանի որ որևէ կերպ չի առնչվել վարկային գործերի կազմմանն ու և ձևակերպմանը: Կատարված գործողություններում ոչ մի անձնական շահագրգռվածություն չի ունեցել, ստորագրել Է մասնաճյուղի վարկային բաժնի կողմից արդեն իսկ ելքագրված դրամարկղի ելքի օրդերները և տպագրել միջնորդավճարները, այնուհետև փաստաթղթերը հանձնել Է գլխավոր հաշվապահի ստորագրությանը, որովհետև չի իմացել, որ հաճախորդը բացակայում Է կամ դրանք անօրինական վարկեր են: Վարկերի մարումների հետ ինքն որևէ առնչություն չի ունեցել և վարկառուներին անձամբ չի ճանաչել, քանի որ մարումները իրականացվել են վարկային բաժնի մասնագետների միջոցով: 2009 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲ ընկերության, "Գորիսի ԷՑԾ" ԲԲ ընկերության "Զանգեզուր-95" և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվների հաշվեհամարներից առանց հաճախորդների ներկայության, ստորագրման և կնիքի դրամարկղային ելքի օրդերներն իր կողմից ձևակերպվել են կառավարիչ Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, որը սպառնացել է՝ դրանք չկատարելու դեպքում հեռացնել աշխատանքից և առաջին իսկ նման կարգադրություն չկատարելու համար սպառնալով իրեն, կատարել Է հասանելիք հավելավճարի նվազեցում, որից հետո բոլոր նման կարգադրություններն իրեն, որպես սպասարկող հաշվապահի, փոխանցել Է գլխավոր հաշվապահ՝ Ալինա Սարգսյանի միջոցով, հավաստիցումներով, որ նշված կազմակերպությունների ղեկավարները տեղյակ են և պատշաճ վավերացումները կկատարվեն հետագայում: Ինչ վերաբերում Է 2009 թվականի մարտի 31-ին "Պայծառ ապագա" ՍՊԸ և "Բերրիություն" ԲԲԸ անվամբ ընդհանուր 245 մլն դրամ վարկային գումարների ելքագրման գործարքներին, ապա այդ գումարները՝ 125մլն դրամը և 120 մլն դրամը նշված կազմակերպությունների հաշվարկային հաշիվներին մուտքագրվել են 31.03.2009թ. վարկային բաժնի կողմից և նույն օրը նշված ընկերությունների կողմից ներկայացվել Է դրամական չեկ, կնիքված և ստորագրված կազմակերպությունների ղեկավարի կողմից, և իր կողմից դրանք տպագրելուց և միջնորդավճարը գանձելուց հետո, ստորագրվել և հանձնվել Է գլխավոր հաշվապահին: Ուստի կատարել Է այն գործողությունները, որոնք պարտավոր Է եղել կատարել, որպես իրավաբանական անձանց սպասարկող հաշվապահ:

Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Անահիտ Արսենի Թորոսյանն ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր Է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք Է տվել,որ 2003 թվականից աշխատում Է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որպես ավագ գանձապահ: Աշխատանքային

պարտականությունների մեջ մտնում է՝ դրամական միջոցների մուտքագրումն ու ելքագրումը, բացառությամբ կոմունալ և բյուջետային վճարումների: 2003 թվականից մինչև 2009 թվականի մայիս ամիսը բանկի կառավարիչ է հանդիսացել Հովիկ Բախշյանը, որը մշտապես կատարել է չարաշահումներ, կապված այլ քաղաքացիների անվամբ վարկեր ձևակերպելու և անձամբ այդ գումարները տնօրինելու հետ: Սակայն սկսած 2006 թվականի վերջից այդ չարաշահումները ձեռք են բերել սիստեմատիկ բնույթ, Հովիկ Բախշյանի կողմից անընդհատ խախտվել են մասնաճյուղերի կողմից տրամադրվող վարկերի չափի վերաբերյալ գլխամասի կողմից որոշված սահմանափակումները, ինչի կապակցությամբ ընկերության ներքին վերահսկողության վարչության մասնագետների կողմից մասնաճյուղում իրականացվել են բազմաթիվ թեմատիկ ստուգումներ, որոնց ընթացքում հայտնաբերվել են խախտումներ և չարաշահումներ, սակայն ամեն ինչ ավարտվել է մեղմ պատիժներով: Ինքը, ինչպես նաև բանկի փորձառու աշխատակիցները, հասկանալով Հովիկ Բախշյանի այդ գործելաոճի անօրինական բնույթն ու վտանգավոր հետևանքները, մշտապես ընդդիմացել են նրա կարգադրություններին, սակայն վերջինս գոռալով իրենց վրա և սպառնալով ազատել աշխատանքից, ստիպել է ենթարկվել պահանջներին, օգտվելով այն հանգամանքից, որ իրենք ոչ մի կերպ չէին կարող մնալ առանց գոյության միակ միջոցի: Ուստի կատարել են Հովիկ Բախշյանի կարգադրությունները, կեղծ վարկերով ելքագրել և նրան հանձնել դրանց գումարները և նույն կարգով, հաշվապահության կողմից պատրաստված դրամարկղի մուտքի օրդերներով մուտքագրել կեղծ վարկերով նախատեսված և Հովիկ Բախշյանի կողմից վճարված սպասարկման վարկային գումարներն ու տոկոսագումարները:

Ինչ վերաբերում է "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲ ընկերության և այլ կազմակերպությունների հաշվեհամարներից 2009 թվականի մարտի 9-ից 31-ն ընկած ժամանակահատվածում առանց պատշաճ վավերացման և դրանց լիազորված անձանց ներկայության գումարների ելքագրումներին և մուտքագրումներին, ապա այդ գործողությունների կատարումն ընդունել է, պատճառաբանելով, որ գործարքները կատարել է ստիպված, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, որը հայտնել է, որ այդ ընկերությունների ղեկավարների հետ ունի պայմանավորվածություն: Նրան ընդդիմանալու փորձերը լարվածություն են առաջացրել իրենց փոխհարաբերություններում, Հովիկ Բախշյանը սպառնացել է, որ կարգադրությունները չկատարելու դեպքում կհասնի իրեն աշխատանքից հեռացմանը, ինչը շատ ծանր հետևանքներ կառաջացներ ընտանիքի համար, քանի որ մի կերպ աշխատավարձով պահել է ընտանիքի գոյությունը: Հովիկ Բախշյանին փաստացի պատկանող "Պայծառ ապագա" ՍՊ և "Բերրիություն" ԲԲ ընկերությունների անվամբ 31.03.2009թ. ամսաթվով ելքագրված 125 մլն դրամ և 120 մլն դրամ գումարի գործարքների վերաբերյալ նշել է, որ Հովիկ Բախշյանից ստացել է արդեն իսկ կնիքված, ստորագրված և լրացված կանխիկի ստացման չեկերը, ինչպես նաև "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲ ընկերության և այլ հաշիվներին ընդհանուր 156 մլն դրամ մուտքագրման օրդերները, որոնք իր կողմից կատարվել են, չնայած նրան, որ նշված ընկերությունների լիազորված անձինք ներկա չեն եղել: Ինքը պարզապես հավատացել է Հովիկ Բախշյանի խոսքերին, որը հավաստիացրել է, որ այդ ամենից ընկերությունների ղեկավարները տեղյակ են, որ հետագայում կստորագրեն և կկնքեն բոլոր փաստաթղթերը, և բացի այդ, վարկային գումարներն ելքագրվել են Հովիկ Բախշյանին պատկանող կազմակերպությունների ելքի դրամարկղային չեկերով, որոնք

պատշաճ վավերացված են եղել նաև տնօրենի կողմից: Ուստի այդ մասով ելքագրումը իր կողմից կատարվել է իրավաչափորեն:

Ամբաստանյալ Հովիկ Բախշյանի կարգադրությամբ, հաշվապահությունից ներկայացված օրդերներով և այլ հիմքերով կատարել է դրանցում նշված գումարային միջոցների ելքագրումներ և մուտքագրումներ, որոնք բանկի կանոնակարգերի խախտմամբ, առանց հաճախորդին տեսնելու, Հովիկ Բախշյանի կարգադրությամբ և պահանջով կանխիկ հանձնել է վերջինիս, սակայն ինչպես շահադիտական, այնպես էլ անձնական կամ որևէ այլ շահագրգռվածություն դրանում չի ունեցել: Առաջադրված մեղադրանքում դատաքննության ընթացում ամբաստանյալ Նազիկ Դերենիկի Մաթևոսյանն ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն մեղավոր չի ճանաչել, այլ մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար և ցուցմունք է տվել, համաձայն որի մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանի կարգադրությամբ կատարել է իրեն մեղսագրվող գործողությունները, սակայն ինչպես շահադիտական, այնպես էլ անձնական կամ որևէ այլ շահագրգռվածություն դրանում չի ունեցել: Ըստ էության նշել է, որ 2009 թվականի հունվարի 13-ից մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում առանց "Որոտանի ՀԷԿՀ" ՓԲԸ և մյուս ընկերությունների լիազորված անձանց ստորագրության օրդերներով և առանց վերջիններիս ներկայության հաշիվներից գումարային ելքագրումները կատարել է բանկի այն ժամանակվա կառավարիչ Հովիկ Բախշյանի անմիջական ցուցումով, որը կանչել է իր աշխատասենյակ և հայտնել, որ ընկերությունների ղեկավարները տեղյակ են հաշվից ելքագրում կատարելու վերաբերյալ, և որ նրանց լիազորված անձինք հետագայում կստորագրեն բոլոր փաստաթղթերը, պատճառաբանելով, որ այդ ամենը կատարվում է բանկի շրջանառության եռամսյակային պլանի կատարումն ապահովելու նպատակով: Հավատալով նրա խոսքերին, կատարել է ցուցումը և հաշվապահությունից ստացված վերոհիշյալ օրդերների հիման վրա կատարել է գումարների ելքագրումներ և դրանք կանխիկ հանձնել Հովիկ Բախշյանին: Թե ինչպե՞ս է վերջինս տնօրինել այդ գումարները, տեղյակ չէ, սակայն նույն այդ ժամանակահատվածում նշված ընկերությունների հաշիվներին նույն կարգով կատարվել են տարբեր գումարների մուտքագրումներ, ինչից ենթադրել է, որ բոլոր ելքագրված գումարները Հովիկ Բախշյանի կողմից նորից մուտքագրվում են: Համոզված է եղել, որ այդ ընկերությունների ղեկավարներն իրոք տեղեկացված են եղել իրենց ընկերությունների հաշիվներից ելքագրումների կատարման վերաբերյալ, այլապես նման գործարքներ չէր կատարի: Նույն կարգով կատարվել են նաև ֆիզիկական անձանց անվամբ ձևակերպված վարկային գումարների ելքագրումներն ու դրանց սպասարկման գումարների մուտքագրումները: Հովիկ Բախշյանի ցուցումով և խստիվ պահանջով 2006-2009 թվականների ընթացքում կոնկրետ անձանց անվամբ ձևակերպված վարկերով գումարներն առանց վարկառուների ներկայության իր կողմից ելքագրվել և կանխիկ տրամադրվել են Հովիկ Բախշյանին, որի կողմից էլ այդ վարկերը սպասարկվել են առանց ժամկետանցման, պայմանագրերով նախատեսված օրերին նույն կարգով մուտքագրելով դրանց սպասարկման գումարները: Տվյալ վարկային գործերը բանկում կազմվել են վարկային բաժնի մասնագետներ Ազնիվ Առաքելյանի և Արշակ Բալույանի կողմից: Քանի որ նշված խախտումները ձեռք էին բերել սիստեմատիկ բնույթ, ապա փորձել է ընդդիմանալ դրանց կատարմանը, սակայն Հովիկ

Բախշյանը, գոռալով սպառնացել է իր կարգադրությունները չկատարելու դեպքում ազատել աշխատանքից, իսկ իր աշխատավարձը հանդիսացել է բազմազավակ ընտանիքի գոյությունը պահելու միակ միջոցը, որը կորցնելով, շատ ծանր վիճակի մեջ կդներ ամբողջ ընտանիքին: Այդ պատճառով ստիպված կատարել է Հովիկ Բախշյանի կարգադրությունները, ընկերությունների հաշիվներից և վարկառուների անվամբ ելքագրված գումարները կանխիկ տվել է նրան, սակայն այդ դեպքում ևս համոզված է եղել, որ վերջինս յուրացման նպատակ չի ունեցել, ինչի մասին վկայել է այն փաստը, որ նա պատշաճ սպասարկել է բոլոր այդ վարկերը:
Ամբաստանյալների կատարած հանցանքը հիմնավորվել է նաև հետևյալ ապացույցներով.
Քրեական գործով վկա Համլետ Հայկի Ավանեսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել, համաձայն որի 2007թ.-ից հանդիսանում է "Տաթև" մասնաճյուղի Գորիսի էլ. ցանցի գլխավոր ճարտարագետը: 2006թ. դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ– ի Գորիսի մասնաճյուղի կառավարիչ ներկայումս ամբաստանյալ Հովիկ Բախշյանին վարկ ստանալու նպատակով, վերջինս խոստացել է օգնել և պահանջել է անհրաժեշտ փաստաթղթեր և անձնագրի պատճենը, որոնք ինքը ներկայացրել է Հովիկ Բախշյանին, Սակայն չունենալով պահանջվող գումարին համապատասխան գրավի առարկա հրաժարվել է վարկ ստանալուց:18.03.2008թ. իր անվամբ կնքվել է սպառողական վարկի թիվ 0061 պայմանագիրը, որի համաձայն ապառիկ կարգով գնված "Ռենո Աեգամ" մակնիշի ավտոմեքենայի գրավադրմամբ տրամադրվել է 8.000.000 ՀՀ դրամի վարկ:Ինքը նման պայմանագիր չի կնքել և նման վարկ չի վերցրել, ապառիկ կարգով վերը նշված մակնիշի մեքենա չի ունեցել:Իր անվամբ վարկային գործում կազմված բոլոր փաստաթղթերը կեղծ են, այդ թվում կեղծ են նաև ավտոմեքենայի գրանցման վկայագրի պատճենը:
Վկա Ռաֆիկ Լևոնի Հակոբյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2006թ. դիմել է համագյուղացի "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղի կառավարիչ Հովիկ Բախշյանին ապառիկ կարգով կահույք գնելու համար վարկ տրամադրելու խնդրանքով: Բախշյանն իրեն չի մերժել, պահանջել է ներկայացնել որոշակի փաստաթղթեր՝ տեղեկանքներ բնակության վայրից, աշխատավարձի չափի մասին, անձնագրի պատճենը: Ստացված վարկը իր կողմից մարվել է վաղաժամկետ:17.09.2007թ. կնքվել է սպառողական վարկի թիվ 00171 պայմանագիրը, համաձայն որի ինքը ստացել է 8.000.000 ՀՀ դրամի վարկ,որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով ձեռք բերված "Վոլկսվագեն Զետտա" մակնիշի ավտոմեքենա: Նման պայմանագիր ինքը բանկի հետ չի կնքել, նման վարկ չի ստացել,նշված ավտոմեքենա մինչև այսօր չի ունեցել: Իր անվամբ փաստաթղթերում նշված ստորագրությունները կեղծ են, նմանեցրել են անձնագրում եղած ստորագրությանը:
Վկա Շիրազ Ռոմիկի Ալեքսանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2006թ.-ին մեկ անգամ դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով գնված սառնարանի վարկավորումն իրականացնելու խնդրանքով,ինչը չի մերժվել նշված բանկի կառավարչի կողմից; Ինքը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերն, այդ թվում նաև անձնագրի պատճենը: Վարկը մարվել է ժամանակին, ինքն այլևս այլ գործարքներ չի կատարել բանկի հետ:03.03.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 0046 պայմանագրով ձևակերպվել է 3.500.000 « դրամ վարկ, որի դիմաց գրավադրվել է Գորիս քաղաքի Արցախյան խճուղի 10/3

հասցեում գտնվող բնակարանը:Ինքը նման վարկ չի վերցրել և կազմված վարկային գործում, բացի իր անձնագրի պատճենից մնացած փաստաթղթերը կեղծ են:Առավել ևս վերը նշված հասցեում երբևիցե սեփականության իրավունքով բնակարան չի ունեցել, ուստի սեփականության վկայագրի պատճենը նույնպես կեղծ է:Ենթադրում է, որ անձնագրի պատճենը վերցվել է 2006թ. բանկում կնքված վարկային գործից: Վկա Սերյոժա Մեժլումի Բաղդասարյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն, որի 2006թ. ստույգ ամիսը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով հեռուստացույցի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:

27.07.2007թ. բանկի հետ կնքված սպառողական վարկի թիվ 00141 պայմանագրով իր անվամբ ձևակերպվել է 6.000.000 դրամի վարկ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "ԳԱԶ-322132" մակնիշի միկրոավտոբուս:Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ, ինքը թոշակառու է, միկրոավտոբուս գնելու ոչ մի հնարավորություն չի ունեցել, ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Վկա Խաչիկ Վոլոդյայի Բաղդասարյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն, որի 2005թ. նոյեմբերի 12-ից առայսօր աշխատում է "Հայռուզգազարդ" ընկերության Գորիսի մասնաճյուղում: 2005 ստույգ ամիսը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով հեռուստացույցի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:

04.03.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 0049 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "ՏՐ.ՅՐ.ՏԱ ԿԱՄԸԻ" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Վկա Պատվական Գառնիկի Ծատրյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն, որի 2004-2005թ.թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով հեռուստացույցի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:

13.10.2007թ. կնքված սպառողական վարկի թիվ 0187 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Ռենո Աեգան" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ

գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը:
Վկա Յաշա Վաղարշակի Օհանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2007թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով հեռուստացույցի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:
03.03.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 045 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Տոյոտա Կամրի" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Վկա Ալիկ Յուրիկի Սարգիսջանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2004թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ եղբոր համար ապառիկ կարգով բջջային հեռախոս գնելու նպատակով, որը չի մերժվել բանկի կողմից և կազմվել է վարկային գործ իր անվամբ: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել: 09.11.2007թ. կնքված սպառողական վարկի թիվ 203 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Ռենո Աեգան" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Կեղծված է նաև ավտոմեքենայի գրանցման ժամանակավոր վկայագրի պատճենը, ըստ որի ավտոմեքենան գրանցված է եղել իր անվամբ:
Վկա Աննա Օնիկի Օհանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2006թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում ամուսնու հետ դիմել են "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ վարկ վերցնելու համար, որի համար գրավադրել են "Նիվա" մակնիշի ավտոմեքենան; Վարկինչափը եղել է 10.000 ԱՄՆ դոլլարին համաժեք ՀՀ դրամ:Վարկը ձևակերպվել է ամուսնու Զոն Հարությունյանի անվամբ, սակայն բանկ է ներկայացրել նաև իր անձնագրի պատճենը; Վարկը ձևակերպվել է 5 տարի ժամկետով և մինչև օրս պատշաճ կարգով կատարում են ամենամսյա մարումներ: Բանկից այլ վարկեր ստանալու համար չեն դիմել: 31.10.2007թ. կնքված սպառողական վարկի թիվ 0193 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Պրադո" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը:

Վկա Մելիք Մամիկոնի Ջանունցը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի մի քանի անգամ վարկեր է վերցրել "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղից՝ ապառիկ կարգով հեռուստացույցի, DVD և այլ ապրանքների գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:
03.10.2007թ. կնքված սպառողական վարկի թիվ 00177 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Աուդի A-4" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը:
Վկա Արման Միսակի Մաշուրյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2007թ. ընթացքում ապառիկ կարգով գնել են հեռուստացույց, որը ձևակերպել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղում և ժամանակին մարվել է: Վարկը ձևակերպել է իր հոր՝ Միսակ Մաշուրյանի անվամբ, որը ներկայումս մեկնել է արտագնա աշխատանքի ՌԴ Կեմերովոյի մարզ: 12.03.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 0057 պայմանագրով ձևակերպվել է 7.345.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Ռենո Մեգան" մակնիշի ավտոմեքենա: Վարկը ձևակերպված է եղել իր հոր անվամբ: Նման վարկի մասին ինքը և հայրը տեղեկություններ չունեին և ինքը այդ մասին իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր հոր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում հոր ստորագրությունները կեղծված են, միայն նրա անձնագրի պատճենն է ճիշտ:
Վկա էրիկ Ստեփանի Մկրտչյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2-3 տարի առաջ դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով հեռուստացույցի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:
17.09.2007թ. կնքված սպառողական վարկի թիվ 00170 պայմանագրով ձևակերպվել է 8.000.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է ապառիկ կարգով գնված "Վոլկսվագեն Պասատ" մակնիշի ավտոմեքենա: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Վկա Նելլի Էդիկի Ղիշոացը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2006թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով բջջային հեռախոսի գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:

29.07.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 1200 պայմանագրով ձևակերպվել է 3.500.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է սեփականության իրավունքով Գորիս քաղաքի Անդրանիկի 12 հասցեում գտնվող բնակելի տունը: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը: Գործում նշված հասցեով բնակելի տուն սեփականության իրավունքով չունի, ուստի սեփականության իրավունքի վկայականի պատճենը նույնպես կեղծ է: Վկա Խաչատուր Աբրահամի Ղազարյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2006թ. ընթացքում ստույգ օրը չի հիշում դիմել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղին՝ ապառիկ կարգով DVD գնումը վարկավորելու համար, որը չի մերժվել բանկի կողմից: Պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացրել է նաև անձնագրի պատճենը: Այդ նպատակով բանկի կողմից տրամադրված վարկը ինքը մարել է ժամանակին ու այլևս բանկի հետ վարկային գործարք չի կատարել:
22.08.2008թ. կնքված սպառողական վարկի թիվ 1216 պայմանագրով ձևակերպվել է 3.500.000 վարկային գործ, որի դիմաց գրավադրվել է սեփականության իրավունքով Գորիս քաղաքի Վարդան Մամիկոնյան 184 հասցեում գտնվող բնակելի տունը: Նման վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2009թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են, միայն անձնագրի պատճենն է իրենը:Նշված հասցեում սեփականության իրավունքով բնակարան չունի, ուստի սեփականության իրավունքի վկայականը նույնպես կեղծված է: Վկաներ Ռաիսա Ռոմանի Մնացականյանը, Գագիկ Ենոքի Մաքունցը, Անահիտ Աշոտի Մանուկյանը, Գարիկ Գառնիկի Սարգսյանը, Կոլյա Գրիգորի Մարգարյանը, Աբրահամ Դավթի Ղազարյանը, Սարմիկ Սերյոժայի Զաքարյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն, որոնց ընդհանրապես ոչ մի անգամ բանկ չեն դիմել վարկ ստանալու համար և իրենց անձնագրերի պատճեններն որևէ մեկի չեն տրամադրել ինչ-որ գործարքներ կատարելու կամ այլ նպատակով: "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց տվյալներով անշարժ գույքի գրավադրմամբ ձևակերպված սպառողական վարկերի և ավտոմեքենաների ապառիկ գնման հիփոթեք ու սպառողական վարկերի վերաբերյալ 2007-2008 թվականների ընթացքում ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ վարկեր ստանալու համար իրենք երբեք բանկ չեն դիմել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկա Կլավա Էդիկի Միրումյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի իր կազմակերպության բանկային հաշիվները սպասարկվում են "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որի նախկին կառավարիչ՝ Հովիկ Բախշյանին ճանաչել է, որպես Գորիս քաղաքի բնակիչ: Ի պաշտոնե լիազորված է եղել բանկային հաշիվներով իրականացնել գործարքներ, որի համար օրենքով սահմանված կարգով բանկ է ներկայացրել իր անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, լիազորագիր և ստորագրության նմուշները, որից հետո

պարբերաբար իրականացրել է տարբեր գործարքներ: Որևէ անգամ վարկ ստանալու համար բանկ չի դիմել և ոչ մի վարկ չի ստացել:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իր անվամբ համապատասխանաբար "ԳԱԶ 322132" մակնիշի միկրոավտոբուսի ապառիկ գնման նպատակով 7.200.000 դրամ գումարի սպառողական վարկերի տրամադրման վերաբերյալ 10.08.2007թ. ամսաթվերով ձևակերպված վարկային գործի կապակցությամբ նշել է, որ այն կեղծ է, քանի որ նման և ընդհանրապես որևէ վարկ ստանալու համար բանկ չի դիմել, այդպիսի վարկ չի ստացել, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իր տվյալների մասում դրված ստորագրություններն իրենը չեն և դրված են այլ անձանց կողմից: Ինքն ընդհանրապես որևէ ավտոմեքենա չի գնել և իր անվամբ գրանցված չի եղել:
Վկաներ Սուրիկ Վոլոդյայի Բալույանի, Սերգեյ Միսակի Հովակիմյանի, Միսակ Ասատուրի Հովակիմյանի, Սուրեն Գավրոշի Գրիգորյանի, Մարկ Մարտինի Աղաբեկյանի, Հակոբ Վլադիմիրի Անդրանիկյանի, Սամվել Ալեքսանդրի Սարգսյանի, Ռաֆիկ Անդրանիկի Ասատրյանի, Հարություն Արկադիի Ծատուրյանի, Նոնա Համլետի Ծատրյանը, Վարդան Վազգենի Մախսուդյանը, Արշավիր Արտեմի Սուջոյանը, Էդիկ Աազրի Հովհաննիսյանի, Աշոտ Վարդանի Գրիգորյանի, Վաղարշակ Միհրանի Սողոմոնյանի, Զոյա Միխայելի Հայրապետյանի, Զիվան Սուրենի Զորունցի, Զավեն Սաշիկի Շալունցի, Հակոբ Մեսրոպի Հակոբյանի, Արտուր Սերգեյի Բակունցի, Սաիդա Արտուշի Ղազարյանի, դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց 2004-2007 թվականների ընթացքում "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի վարկավորմամբ ձեռք են բերել տարբեր կենցաղային և էլեկտրական ապրանքներ, ինչպես նաև իրենց անձնական կարիքների համար, տրանսպորտային միջոցների գրավադրմամբ ստացել են սպառողական վարկեր, որոնց համար սահմանված կարգով բանկ են ներկայացրել բոլոր պահանջվող փաստաթղթերը՝ իրենց անձնագրերի պատճենները, տեղեկանքներ հաշվառման վայրի և աշխատավարձի վերաբերյալ, իսկ տրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում՝ նաև դրանց գրանցման վկայականները:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց տվյալներով անշարժ գույքի գրավադրմամբ ձևակերպված սպառողական վարկերի և ավտոմեքենաների ապառիկ գնման հիփոթեք և սպառողական վարկերի վերաբերյալ 2007-2008 թվականների ընթացքում ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ նման վարկեր ստանալու համար իրենք բանկ չեն դիմել, նշված վարկերը չեն ստացել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկաներ Մերի Անուշավանի Խաչյանը, Գարիկ Համլետի Արզումանյանը, Նազիկ Սպարտակի Հակոբյանը, Մարտին Մարատի Հայրյանը, Գյուլչորա Ալոնի Վանեսյանը, Գրիգոր Կարենի Ստեփանյանը, Ռիտա Սուրենի Աղաբեկյանը, Աշոտ Վաղարշակի Մկրտչյանը, Աիպարիտ Վոլոդյայի Մաշուրյանը, Գրիշա Միշայի Խաչատրյանը, Մայիս Հենրիկի Ավետյանը, Հերմինե Ռուբիկի Վանյանը, Կարեն Կառլենի Միրզոյանը և Անահիտ Գևորգի Հակոբյանը՝ դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց 2006-2008 թվականների ընթացքում աշխատել են "Պայծառ ապագա" ՍՊ և "Բերրիություն" ԲԲ ընկերություններում, որոնց

սեփականատեր և միաժամանակ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ հանդիսացած Հովիկ Բախշյանի պահանջով, ընկերությունում որպես աշխատող գրանցելու և անձնական գործ կազմելու նպատակով, վերջինիս ներկայացրել են իրենց անձնագրերի և այլ փաստաթղթերի պատճեններն ու աշխատանքային գրքույկները, և որոշ ժամանակ աշխատելուց հետո, ազատվել են աշխատանքից:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց տվյալներով անշարժ գույքի գրավադրմամբ ձևակերպված սպառողական վարկերի և ավտոմեքենաների ապառիկ գնման հիփոթեք և սպառողական վարկերի վերաբերյալ 2007-2008 թվականների ընթացքում ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ նման վարկեր ստանալու համար իրենք բանկ չեն դիմել, նշված վարկերը չեն ստացել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկաներ Ալետա Արամի Հարությունյանը և Մարինե Էդիկի Վանյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց աշխատում են "Պայծառ ապագա" ՍՊ ընկերությունում, որոնց սեփականատեր և միաժամանակ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ հանդիսացած Հովիկ Բախշյանի պահանջով, որպես աշխատող գրանցելու և անձնական գործ կազմելու նպատակով, վերջինիս ներկայացրել են իրենց անձնագրերի և այլ փաստաթղթերի պատճեններն ու աշխատանքային գրքույկները:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց տվյալներով թանկարժեք ավտոմեքենաների ապառիկ գնման հիվտթեք վարկերի վերաբերյալ ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ նման վարկեր ստանալու համար իրենք բանկ չեն դիմել, նշված վարկերը չեն ստացել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկաներ Համլետ Իշխանի Հայրապետյանը, Ղերենիկ Արամայիսի Վարդազարյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց 2004-2007 թվականների ընթացքում նպատակային վարկ ստանալու համար դիմել են "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղ, ներկայացնելով բանկի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը, սակայն փաստաթղթերը ներկայացնելուց որոշ ժամանակ անց բանկի այդ ժամանակվա կառավարիչ Հովիկ Բախշյանը, հայտնելով, որ ներկայացված փաստաթղթերը բավարար չեն վարկ տրամադրելու համար կամ բերելով այլ պատճառաբանություններ, մերժել է վարկի տրամադրումը, չվերադարձնելով ներկայացված փաստաթղթերը:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց տվյալներով անշարժ գույքի գրավադրմամբ ձևակերպված սպառողական վարկերի և ավտոմեքենաների ապառիկ գնման հիփոթեք վարկերի վերաբերյալ 2007-2008 թվականների ընթացքում ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ նման վարկեր ստանալու համար իրենք բանկ չեն դիմել, նշված վարկերը չեն ստացել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և

տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկա Արմինե Արտաշեսի Միրզոյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի ինքը հանդիսանում է « կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ և հասանելիք աշխատավարձը ստանում է պլաստիկ բանկային քարտով՝ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում բացված իր հաշվից, որի համար սահմանված կարգով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերի պատճենները: Թե ինքը, թե Ռուսաստանի Դաշնությունում մշտապես բնակվող քույրը՝ Անուշ Արտաշեսի Միրզոյանը ընդհանրապես բանկ չեն դիմել վարկ ստանալու համար: "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իր տվյալներով անշարժ գույքի գրավադրմամբ 30.08.2007թ. և 24.102007թ., ինչպես նաև քրոջ տվյալներով 21.10.2007թ. ձևակերպված 3.500.000-ական դրամ գումարի երեք սպառողական վարկերի կապակցությամբ նշել է, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ վարկեր ստանալու համար իրենք երբեք բանկ չեն դիմել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն: 30.08.2007թ. վարկով իր անվամբ գրավադրված և 21.10.2007թ. վարկով քրոջ անվամբ գրավադրված տները պատկանում են համապատասխանաբար իրեն և քրոջը, իսկ 24.10.2007թ. ամսաթվով ձևակերպված վարկով իր անվամբ գրավադրված տան վերաբերյալ որևէ տեղեկություն չունի: Քույրը հազվադեպ է այցելում Հայաստան, այն էլ ամառային ամիսներին, ուստի վերջինս չէր կարող 2007 թվականի հոկտեմբերին գտնվել Գորիսում և վարկ ստանալ բանկից: Վկա Էլեոնորա Պատվականի Հարությունյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի ինքը, թե քույրը՝ Ֆրիդա Պատվականի Հարությունյանը ընդհանրապես բանկ չեն դիմել վարկ ստանալու համար և իրենց անձնագրերի պատճենները գործարք կատարելու կամ այլ նպատակով որևէ մեկի չեն տրամադրել: "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իր անվամբ "Տոյոտա Պրադո" մակնիշի ավտոմեքենայի ապառիկ գնման նպատակով 8.0 մլն դրամ և քրոջ անվամբ "Ֆոլկսվագեն-Տուարեգ" մակնիշի ավտոմեքենայի ապառիկ գնման նպատակով 18.0 մլն դրամ գումարի սպառողական վարկերի տրամադրման վերաբերյալ 31.10.2007թ. և 13.09.2009թ. ամսաթվերով ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել է, որ դրանք ամբողջությամբ կեղծ են, քանի որ ընդհանրապես վարկ ստանալու համար բանկ չեն դիմել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և տեղյակ չեն եղել իրենց անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում իրենց տվյալների մասում դրված ստորագրություններն իրենցը չեն:
Վկաներ Ալիկ Սուրիկի Հովհաննիսյանը, Լիդա Արտուշի Գասպարյանը, Վերգուշա Բագրատի Մարգարյանը և Սմբատ Գարեգինի Ղազարյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց իրենց հարազատները՝ համապատասխանաբար հայրը՝ Սուրիկ Հովհաննիսյանը, ամուսինը՝ Վլադիկ Գասպարյանը, որդին՝ Վալենտին Մարգարյանը և որդին՝ Սևադա Ղազարյանը ընդհանրապես ոչ մի անգամ բանկ չեն դիմել վարկ ստանալու համար և իրենց

անձնագրերի պատճեններն որևէ մեկի չեն տրամադրել գործարքներ կատարելու կամ այլնպատակով:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իրենց հարազատների անվամբ անշարժ գույքի գրավադրմամբ ձևակերպված սպառողական վարկերի և ավտոմեքենաների ապառիկ գնման հիփոթեք ու սպառողական վարկերի վերաբերյալ 2007-2008 թվականների ընթացքում ձևակերպված վարկային գործերի կապակցությամբ նշել են, որ դրանք կեղծ և շինծու են, քանի որ երբևիցե վարկ ստանալու համար իրենց հարազատները բանկ չեն դիմել, որևէ առնչություն դրանց հետ չեն ունեցել և թե իրենք, թե հարազատները տեղյակ չեն եղել վերջիններիս անվամբ ձևակերպված վարկերի գոյության մասին, իսկ վարկային գործերում առկա փաստաթղթերում հարազատների տվյալների մասում դրված ստորագրությունները վերջիններիս չեն պատկանում:
Վկաներ Գառնիկ Հայկի Սարգսյանը, Կարինե Սերյոժայի Առաքելյանը, Ոսկան Նելսոնի Ոսկանյանը, Արայիկ Ռուդիկի Գադունցը, Ալվարդ Վոլոդյայի Վադունցը, Վանիկ Վաչագանի Ոսկանյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց իրենց կազմակերպությունների բանկային հաշիվները սպասարկվում են "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որի կառավարիչ 2003 թվականից մինչև 2009 թվականի մայիս ամիսը հանդիսացել է՝ Հովիկ Բախշյանը, որին ճանաչել են, որպես Գորիս քաղաքի բնակիչ և նրա հետ ունեցել են աշխատանքային և ընկերական հարաբերություններ: Ի պաշտոնե լիազորված են եղել բանկային հաշիվներով իրականացնել գործարքներ, որի համար օրենքով սահմանված կարգով բանկ են ներկայացրել իրենց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, լիազորագրերը և ստորագրության նմուշները, որից հետո պարբերաբար իրականացրել են տարբեր գործարքներ: Յուրաքանչյուր գործարքի կատարման դեպքում պարտադիր կարգով պահպանվել են օրենքով սահմանված հաշվապահական ձևակերպման պահանջները, բոլոր գործարքները կատարվել են կազմակերպությունների ղեկավարների, հաշվապահների և այլ լիազորված անձանց կողմից և կազմակերպությունների կնիքով վավերացված համապատասխան վճարային պահանջագրերի, դրամարկղային մուտքի և ելքի օրդերների և կանխիկի ստացման չեկերի միջոցով, որից հետո բանկի հաշվապահությունից ստացել են հաշվի շարժի քաղվածքներ:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում 2009 թվականի հունվարի 13-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում իրենց կազմակերպությունների հաշիվներով, առանց վերջիններիս ղեկավարների և լիազորված անձանց վավերացման և կնիքման դրամարկղային ելքի և մուտքի օրդերներով և վճարային հանձնարարագրերով բազմաթիվ դեպքերով գումարների ելքագրումներ և մուտքագրումներ, ինչպես նաև փոխանցումներ և կանխիկացումներ կատարելու վերաբերյալ նշել են, որ այդ բոլոր գործարքները կեղծ են և անհիմն, քանի որ կատարվել են Հովիկ Բախշյանի և բանկի աշխատակիցների կողմից առանց իրենց համաձայնության և գիտության, իսկ այդ նույն ժամանակահատվածում բանկի կողմից իրենց տրամադրված հաշիվների շարժի քաղվածքներում այդ գործարքներն արտացոլված չեն եղել: Ապօրինի գործարքների մասին իմացել են միայն այդ բոլոր չարաշահումները բացահայտվելուց հետո, երբ բանկում իրականացվող ստուգման ընթացքում նոր կառավարիչից ստացել են իրենց կազմակերպությունների հաշիվների

շարժի իրական քաղվածքները, որոնցում արդեն արտացոլված են եղել այդ բոլոր անօրինական գործարքները:
Վկա Հայկ Գառնիկի Սարգսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի իրենց կազմակերպության բանկային հաշիվները սպասարկվում են "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որի կառավարիչ 2003 թվականից մինչև 2009 թվականի մայիս ամիսը հանդիսացել է՝ Հովիկ Բախշյանը: Ի պաշտոնե լիազորված է եղել բանկային հաշիվներով իրականացնել գործարքներ, որի համար օրենքով սահմանված կարգով բանկ է ներկայացրել իր անձը և կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները, լիազորագիրը և ստորագրության նմուշները, որից հետո պարբերաբար իրականացրել են տարբեր գործարքներ: Յուրաքանչյուր գործարքի կատարման դեպքում պարտադիր կարգով պահպանվել են օրենքով սահմանված հաշվապահական ձևակերպման պահանջները, բոլոր գործարքները կատարվել են պատշաճ կարգով վավերացված համապատասխան վճարային պահանջագրերի, դրամարկղային մուտքի և ելքի օրդերների և կանխիկի ստացման չեկերի միջոցով, որից հետո բանկի հաշվապահությունից ստացել են հաշվի շարժի քաղվածքներ:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում 2009 թվականի հունվարի 13-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում իրենց կազմակերպության բանկային հաշվով, առանց ղեկավարների և լիազորված անձանց վավերացման և կնիքման դրամարկղային ելքի և մուտքի օրդերներով և վճարային հանձնարարագրերով բազմաթիվ դեպքերով գումարների ելքագրումներ և մուտքագրումներ, ինչպես նաև փոխանցումներ և կանխիկացումներ կատարելու վերաբերյալ նշել է, որ այդ բոլոր գործարքները կեղծ և անհիմն են, քանի որ կատարվել են Հովիկ Բախշյանի և բանկի աշխատակիցների կողմից առանց իրենց համաձայնության և գիտության, իսկ այդ նույն ժամանակահատվածում բանկի կողմից տրամադրված հաշիվների շարժի քաղվածքներում այդ գործարքներն արտացոլված չեն եղել: Ապօրինի գործարքների մասին իմացել է միայն այդ բոլոր չարաշահումները բացահայտվելուց հետո, երբ բանկում իրականացվող ստուգման ընթացքում նոր կառավարիչից ստացել են իրենց ընկերության հաշվի շարժի իրական քաղվածքը, որում արդեն արտացոլված են եղել այդ բոլոր անօրինական գործարքները:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իր անվամբ "BMW-X5" մակնիշի 18ԱԱ888 պետհամարինիշի ավտոմեքենայի ապառիկ գնման նպատակով 6.0 մլն դրամ գումարի սպառողական վարկի տրամադրման վերաբերյալ 09.07.2008թ. ամսաթվով ձևակերպված վարկային գործի կապակցությամբ նշել է, որ այն ամբողջությամբ կեղծ է, քանի որ նման և ընդհանրապես որևէ վարկ ստանալու համար բանկ չի դիմել, այդպիսի վարկ չի ստացել, այդպիսի ավտոմեքենա ընդհանրապես չի գնել, իսկ վարկային գործում առկա փաստաթղթերում իր տվյալների մասում դրված ստորագրություններն իրենը չեն:
Վկա էրիկ Լենդրոշի Հայրապետյանը դատաքննության ընթացքում ցուցմունք Է տվել համաձայն որի իր կոոպերատիվի բանկային հաշիվը սպասարկվում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում, որի կառավարիչ 2003 թվականից մինչև 2009 թվականի մայիս ամիսը հանդիսացել է ընկերը՝ Հովիկ Բախշյանը: Բանկային հաշվեհամարով իրականացվել են կոոպերատիվի բնականոն գործունեության հետ կապված բազմաթիվ գործարքներ, որի համար օրենքով սահմանված կարգով բանկ է ներկայացվել իր և գլխավոր հաշվապահի անձը և

կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները, լիազորագիրը և ստորագրության նմուշները: Յուրաքանչյուր գործարքի կատարման դեպքում պարտադիր կարգով պահպանվել են օրենքով սահմանված հաշվապահական ձևակերպման պահանջները, բոլոր գործարքները կատարվել են պատշաճ կարգով վավերացված համապատասխան վճարային պահանջագրերի, դրամարկղային մուտքի և ելքի օրդերների և կանխիկի ստացման չեկերի միջոցով, որից հետո բանկի հաշվապահությունից ստացել են հաշվի շարժի քաղվածքներ: "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղում 2009 թվականի հունվարի 13-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում "Անապատ-2" արտադրական կոոպերատիվի բանկային հաշվով, առանց ղեկավարի և լիազորված անձի վավերացման և կնիքման դրամարկղային ելքի և մուտքի օրդերներով և վճարային հանձնարարագրերով բազմաթիվ դեպքերով գումարների ելքագրումներ և մուտքագրումներ, ինչպես նաև փոխանցումներ և կանխիկացումներ կատարելու վերաբերյալ նշել է, որ այդ բոլոր գործարքները կեղծ և անհիմն են, քանի որ կատարվել են Հովիկ Բախշյանի և բանկի աշխատակիցների կողմից առանց իր համաձայնության և գիտության, իսկ այդ նույն ժամանակահատվածում բանկի կողմից տրամադրված հաշիվների շարժի քաղվածքներում այդ գործարքներն արտացոլված չեն եղել: Ապօրինի գործարքների մասին իմացել է միայն այդ բոլոր չարաշահումները բացահայտվելուց հետո, երբ բանկում 2009 թվականի ապրիլի ընթացքում իրականացվող ստուգման ընթացքում Հովիկ Բախշյանը, հայտնելով կատարված նշված ապօրինի գործարքների մասին և որ գտնվում է ծանր վիճակում, խնդրել է 09.03.2009թ. ամսաթվով կազմել և տրամադրել 17.900.000 դրամ գումարի կանխիկի ստացման չեկ՝ ստուգողներին ներկայացնելու համար, որն ինքը կատարել և չեկը հանձնել է Հովիկ Բախշյանին, հաշվի առնելով իրենց մտերմությունը:
"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղից առգրավված՝ իր անվամբ "Ֆորդ-Տրանզիտ" մակնիշի միկրոավտոբուսի ապառիկ գնման նպատակով 7.0 մլն դրամ գումարի սպառողական վարկի տրամադրման վերաբերյալ 16.02.2007թ. ամսաթվով ձևակերպված վարկային գործի կապակցությամբ նշել է, որ այն ամբողջությամբ կեղծ է, քանի որ նման վարկ ստանալու համար բանկ չի դիմել, այդպիսի վարկ չի ստացել, այդպիսի ավտոմեքենա ընդհանրապես չի գնել, իսկ վարկային գործում առկա փաստաթղթերում իր տվյալների մասում դրված ստորագրություններն իրենը չեն:
Վկա Լենա Թևանի Գյուլնազարյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի ինքը 1988 թվականից հանդիսանում է "Գորիս" նոտարական տարածքի նոտար և սպասարկում է տարածքի բնակիչների և կազմակերպությունների գործարքները: Օրենքով սահմանված կարգով կատարված գործարքների նոտարական վավերացումները համապատասխան կարգով հաշվառվում են նոտարական գործողությունների հաշվառման սեղանամատյանում, որում նշվում է նոտարական գործարքի տեսակը, կատարման ամսաթիվը և դրվում են գործարքի կողմերի ստորագրությունները: Նույն կարգով կատարվում և հաշվառվում են նաև բանկերի կողմից ներկայացված՝ անշարժ և շարժական գույքի գրավի պայմանագրերը, որոնց վավերացման ժամանակ պարտադիր կարգով պետք է ներկա գտնվեն բանկի լիազորված անձը՝ գրավառուն և գրավատուն, որոնք ստորագրում են սեղանամատյանում: Այդ կարգով աշխատել է նաև "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի գործերով, մասնավորապես կառավարիչ՝ Հովիկ

Բախշյանի հետ, և այդ ընթացքում որևէ խնդիր չի առաջացել: Միայն վերջինիս ձերբակալումից հետո իրենց գրասենյակ են այցելել բանկում ստուգում իրականացնող « կենտրոնական բանկի մասնագետները, որոնք ներկայացրել են 10-15 կեղծ վարկային գործեր, որոնցում առկա կոշտ գրավի պայմանագրերը վավերացված էին իր անվամբ: Սկզբնական արտաքին զննման հիման վրա հայտնել է, որ պայմանագրերը վավերացված են իր կողմից, սակայն ավելի մանրակրկիտ զննման և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ իր անվամբ կատարված նոտարական վավերացման նշումները, կլոր կնիքի դրոշմը և իր ստորագրություններն ու նոտարական հոլոգրաֆիկ դրոշմանիշները կեղծված են համակարգչային տեխնիկայի միջոցով: Պարզվել է նաև, որ բոլոր կեղծ վավերացումների դեպքում փակցված են միևնույն՝ 2992083 համարանիշով հոլոգրաֆիկ դրոշմանիշները, որոնք կեղծ են և բազմացված են համակարգչային տեխնիկայի միջոցով, իսկ վավերացման նշումների վրա դրված են հաշվառման ռեեստրի տարբեր համարներ, որոնք նույնպես սեղանամատյանում գոյություն չունեն կամ վերաբերում են այլ գործարքներին: Նշված հոլոգրաֆիկ դրոշմանիշի համարանիշը համապատասխանում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի կողմից Սամսոն Միրաքյանի հետ կնքված՝ բնակարանի գրավադրման պայմանագրի՝ 05.12.2007թ. վավերացման հաշվառմանը, որի ժամանակ հիփոթեքի պայմանագիր է կնքվել նույն բանկի և Նարեկ Միրաքյանի միջև:

Վկա Արարատ Մուշեղի Խոյլունցը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել համաձայն որի 2001 թվականից մինչև 2008 թվականի օգոստոսի 19-ն ինքն աշխատել է « ոստիկանության ճանապարհային ոստիկանության Գորիսի հաշվառման-քննական խմբի ավագ տեսուչի պաշտոնում: Ի պաշտոնե, որպես խմբի ղեկավար, կազմակերպել է խմբի աշխատանքը, որը բաղկացած է եղել երեք աշխատակիցներից՝ իրենից, տեսուչ Աբել Ալեքսանյանից և խմբի միաժամանակ՝ անձնագրավար, օպերատոր և դիմում գրողի աշխատանքները կատարող Սվետա Բաղդասարյանից: Տրանսպորտային միջոցների հաշվառումները և գրանցման ժամանակավոր վկայագրերը տրամադրելու կարգի համաձայն, քաղաքացուց դիմում է ընդունվում, որից հետո զննվում է տրանսպորտային միջոցը, մինչև հիմնական նմուշի՝ պլաստիկ քարտով տեխանձնագրի տրամադրումը, որպես ժամանակավոր տեխանձնագիր տրամադրվում է տրանսպորտային միջոցի գրանցման(հաշվառման) ժամանակավոր վկայագիրը, որում Սվետա Բաղդասարյանի կողմից ձեռագիր նշվում են տրանսպորտային միջոցի բոլոր տվյալները՝ մակնիշը, պետհամարանիշը, թափքի տեսակը, թողարկման տարեթիվը, հաշվառման վերցնելու ամսաթիվը, նույնացման, շարժիչի և թափքի համարները, գույնը, հատուկ նշումներ ավտոմեքենայի վրա վերասարքավորումների առկայության, ծագման վերաբերյալ, սեփականատիրոջ անձնագրային տվյալները, ինչպես նաև տվյալ վկայագիրը հաստատող պաշտոնատար անձի տվյալները՝ կոչումը և ազգանունը: Դրանից հետո բոլոր փաստաթղթերի հետ միասին այն ներկայացվում է պաշտոնատար անձին, որը դրանք ուսումնասիրելով և ստուգելով՝ ստորագրությամբ և կլոր կնիքով վավերացնում է փաստաթուղթը: Եթե տրանսպորտային միջոցը ձեռք է բերվում ապառիկ կարգով և գրավադրվում է բանկում, ապա բանկից համապատասխան գրություն է ներկայացվում 2 օրինակից՝ տրանսպորտային միջոցն արգելանքի վերցնելու մասին, որոնք վավերացվում են, մեկ օրինակը տրվում է քաղաքացուն՝ բանկ ներկայացնելու նպատակով, իսկ մյուս օրինակը կցվում է տվյալ տրանսպորտային միջոցի հաշվառման քարտին: Բանկ է ներկայացվում և վարկային գործի մեջ է դրվում

ճանապարհային ոստիկանության կլոր կնիքով վավերացված՝ տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր վկայագրի իսկական օրինակը, այլ ոչ թե պատճենը: Հովիկ Բախշյանին ճանաչում է դեռևս մանկուց, քանի որ վերջինս Գորիս քաղաքում բնակվել է իր հարևանությամբ, վերջինս զբաղեցրել է տարբեր պաշտոններ, 2003-2009 թվականներին հանդիսացել է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ, իրենց միջև եղել են աշխատանքային շփումներ: "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղից առգրավված վարկային գործերում առկա, որպես գրավի առարկա ձևակերպված տրանսպորտային միջոցների հաշվառման, գրանցման վերաբերյալ իր անվամբ վավերացված և տրամադրված ժամանակավոր վկայագրերի պատճենների վերաբերյալ նշել է, որ դրանք բոլորը կեղծ են, քանի որ դրանցում կատարված ձեռագիր նշումները չեն համապատասխանում իրենց մոտ կատարված նշումների ձևին և ձեռագրին, իսկ բոլոր վկայագրերի ներքևի մասում դրված կլոր կնիքի դրոշմն ու իր տվյալներն ու ստորագրությունները առանց որևէ տարբերության նույն եղանակով են դրված և գտնվում են նույն դիրքում, ինչն իրականում բացառվում է, քանի որ նույն կերպ և նույն դիրքում հնարավոր չէ անգամ երկրորդ անգամ ստորագրել, կնիքել կամ գրառումներ կատարել: Դա նույնպես վկայում է նրա մասին, որ վկայագրերը կեղծ են և իրենց կողմից չեն տրամադրված: Վկա Արմենակ Գառնիկի Թունյանը դատաքննության ընթացքում ցուցմունք տվեց, համաձայն որի "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի Գորիսի մասնաճյուղից ոչ մի անգամ վարկ չի ստացել և այդ հարցով բանկին չի դիմել: Ինքը միայն իր անձնագրի պատճենը ներկայացրել է "Ագրոբանկի" Գորիսի մասնաճյուղին որպես ԱՁ գրանցվելու համար,մեկ անգամ էլ այնտեղից ստացել է քրոջ ամուսնու կողմից Ո-Դ-ից ուղարկված գումար:Այլ շփումներ բանկերի հետ չի ունեցել: Վարկի մասին ինքը տեղեկություն չունի և իմացել է 2010թ. ամռանը, երբ բանկի աշխատակիցները հայտնել են, որ նման վարկ գոյություն ունի իր անվամբ: Ներկայացված փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են:Ինքը մեքենա չի գնել, չի ունեցել և չի գրավադրել: Վկաներ Ռուբեն Բորիսի Ներսիսյանն ու Խաչիկ Հովսեփի Մկրտչյանը դատաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել համաձայն որոնց 2009 թվականի ապրիլի 1-ին ընկերության՝ մշտական մոնիտորինգ իրականացնող խմբի կողմից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ "Գորիս" մասնաճյուղի կողմից սահմանված կարգերի խախտմամբ՝ առանց ընկերության վարչության որոշման և թույլտվության, ձևակերպվել է ընդհանուր 245 մլն դրամ գումարի երկու վարկ, որից հետո պարզաբանման նպատակով, ընկերության վարչության հանձնարարականով ստուգող խմբի կազմում մեկնել են Գորիս: Իրականացված ստուգմամբ պարզվել է, որ "Գորիս" մասնաճյուղի կառավարիչ՝ Հովիկ Բախշյանը, սկսած 2006 թվականից տարբեր քաղաքացիների և կազմակերպությունների անվամբ, առանց դրանց գիտության, փաստաթղթային կեղծիքների միջոցով ձևակերպել է տարբեր գումարների վարկեր, որից հետո այդ գումարները կանխիկ կամ փոխանցումների միջոցով հափշտակել է, տնօրինելով իր հայեցողությամբ և օգտագործելով իր կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների և իր անձնական կարիքների համար: Հովիկ Բախշյանին երկար ժամանակ հաջողվել է քողարկել իր հանցավոր գործունեությունը՝ նոր վարկերի միջոցով սպասարկելով նախկինում ձևակերպված կեղծ վարկերը: Բացի այդ, 2009 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում բանկի հաճախորդ կազմակերպությունների՝ "Որոտանի ՀԷԿՀ", "Զանգեզուր-95" ԱԿ և մյուսների հաշվեհամարներից, առանց վերջիններիս

ղեկավարների և լիազորված անձանց վավերացման կեղծ մեմորիալ օրդերներով կանխիկ ելքագրել և հափշտակել է խոշոր չափերի գումարներ: Միայն "Որոտանի ՀԷԿ" ՓԲ ընկերության հաշվեհամարից Հովիկ Բախշյանը հափշտակել է 190 մլն դրամ գումար, ինչը քողարկելու, ընկերության կողմից ներկայացված 143 մլն դրամ գումարի փոխանցման վերաբերյալ վճարային հանձնարարականը կատարելու նպատակով, իր կողմից փաստացի ղեկավարվող երկու ընկերությունների անվամբ ձևակերպել է 245 մլն դրամ գումարի երկու վարկեր, որի միջոցով մարել է "Որոտանի ՀԷԿ" ՓԲ ընկերության հաշվեհամարից հափշտակված գումարը: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Հովիկ Բախշյանի և մյուսների հանցավոր գործունեության արդյունքում "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերությանը պատճառվել է ընդհանուր մոտ 700 մլն դրամ գումարի վնաս: Տուժողի ներկայացուցիչ Տիգրան Վահանի Խաչատրյանը դատաքննության ընթացքում հայտնել է, որ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության վարչության նախագահի կողմից վավերացված լիազորագրով լիազորված է ներկայացնելու ընկերության շահերը: "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Գորիս" մասնաճյուղի նախկին կառավարիչ Հովիկ Բախշյանի և մյուսների ապօրինի գործողությունների հետևանքով ընկերությանը պատճառվել է 693.808.812,70 ՀՀ դրամ գումարի գույքային վնաս, ինչը հիմնավորվել է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության ներքին վերահսկողության վարչության և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության մասնագետների կողմից "Գորիս" մասնաճյուղում իրականացված վերստուգման արդյունքներով, ինչի համար պահանջում է պատճառված վնասի վերականգնումը և պնդում է այդ գումարի չափովքաղաքացիական հայցը:

Վկաներ Արարատ Սիմոնի Հովսեփյանը, Արմիդա Երվանդի Հարությունյանը, Սուրեն Սլավիկի Ամիրյանը, Գնել Գագիկի Թելունցը,Յուրիկ Սերյոժայի Սաֆարյանը, Մերի Մուրադիկի Ավագյանը, Համլետ Հմայակի Միրզոյանը, Հրաչ Վլադիմիրի Խաչատրյանը, Վարդան Վիգուշի Մանուչարյանը, Կառլեն Արամի Մինասյանը, Անահիտ Արամայիսի Վարդազարյանը, Սասուն Սաշայի Խաչատրյանը ծանուցվել են դատական նիստի տեղի և ժամանակի մասին, սակայն դատարան չեն ներկայացել: Հրապարակվեցին չներկայացած վկաների նախաքննական ցուցմունքներն, որոնց կապակցությամբ հայտարարություններ չեղան:

Դատաքննության ընթացքում որպես լրացուցիչ վկաներ հարցաքննվեցին Կարեն Սեդրակյանը, Գոհարիկ Գյուրջյանը,Արթուր Կուջոյանը :

"Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղից 01.10.2009թ. առգրավված՝ Սերգեյ Հովակիմյանի, Աիլիթ Բախշյանի, Հրաչ Խաչատրյանի, Մարինե Վանյանի, Միեր Խաչյանի, Գարիկ Արզումանյանի, Սաիդա Ղազարյանի, Սևադա Ղազարյանի, Էդիկ Հայրապետյանի, Համլետ Միրզոյանի, Յուրիկ Սաֆարյանի, Արկադի Ծատուրյանի, Անահիտ Հակոբյանի, Գյուլչորա Վանեսյանի, Հրանտ Բախշյանի, Սուրիկ Բալույանի, Վաղարշակ Սողոմոնյանի, Մելիք Զանունցի, Հակոբ Անդրանիկյանի, Սամվել Սարգսյանի, Ռաֆիկ Ասատրյանի, Վալենտին Մարգարյանի, Համլետ Ավանեսյանի, Գարնանուշ Խաչունցի, Վլադիմիր Մարդյանի, Արմենակ Թունյանի, Գնել Թելունցի, Աիպարիդ Մաշուրյանի, Արարատ Թանգյանի, Էդիկ Հովհաննիսյանի, Միսակ Հովակիմյանի, Գարիկ Սարգսյանի, Մերի Ավագյանի, Ռաիսա Մնացականյանի, Կարեն Միրզոյանի, Լևոն Սարգսյանի, Միսակ Մաշուրյանի, Նելլի Դիշունցի, Նոնա Ծատրյանի, Զիվան Զորունցի, Աննա Օհանյանի,Վլադիմիր Գասպարյանի, Անուշ

Միրզոյանի, Կլավա Միրումյանի, Հերմինե Վանյանի, Պատվական Ծատրյանի, Սարմիկ Զաքարյանի Ալիկ Սարգիսջանյանի, էլյանորա Հարությունյանի, Կարեն Ասատրյանի, Խաչիկ Բաղդասարյանի, Սուրիկ Հովհաննիսյանի, Արշավիր Սուջոյանի, Սաշիկ Հարությունյանի, Արմիդա Հարությունյանի,Աշոտ Մկրտչյանի, Յաշա Օհանյանի, Ռիտա Աղաբեկյանի, Վարդան Մանուչարյանի, Աբրահամ Ղազարյանի, Ռաֆիկ Հակոբյանի, Գրիշա Խաչատրյանի, էրիկ Մկրտչյանի, Դերենիկ Վարդազարյանի, Անահիտ Վարդազարյանի, Հայկ Սարգսյանի, Շիրազ Ալեքսանյանի, Արարատ Հովսեփյանի, Մարկ Աղաբեկյանի, Մայիս Ավետյանի,Գրիգոր Ստեփանյանի, Ֆրիդա Հարությունյանի, Նազիկ Հակոբյանի, Սերյոժա Բաղդասարյանի, Մարտին Հայրյանի, Աշոտ Գրիգորյանի, Զավեն Շալունցի, Արմինե Միրզոյանի անվամբ՝ 2, Համլետ Հայրապետյանի, Սուրեն Ամիրյանի, Հալկոբ Հակովյանի, Ալետա Հարությունյանի Անահիտ Մանուկյանի, Զոյա Հայրապետյանի, Վարդան Մախսուդյանի, Գագիկ Մաքունցի, Կառլեն Մինասյանի, Կոլյա Մարգարյանի, Խաչատուր Ղազարյանի, Սուրեն Գրիգորյանի, Արթուր Բակունցի և "Պայծառ Ապագա" ՍՊԸ-ի անվամբ կազմված կեղծ վարկային գործերով: "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղից 30.10.2009թ., 04.11.2009թ. և 04.12.2009թ. առգրավված՝ վերը նշված կեղծ վարկային գործերով, գումարների ելքագրման, դրամարկղային ելքի և մուտքի օրդերներով, վարկառուների անվամբ հաշիվ բացելու և գումար ելքագրելու վերաբերյալ Հովիկ Բախշյանի գրավեր կարգադրություններով, կանխիկի ստացման չեկերով՝ ընդհանուր 137 փաստաթղթերով: Քրեական գործով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ "Գորիս" մասնաճյուղում ֆինանսատնտեսական ստուգում նշանակելու մասին 25.05.2009թ. որոշման հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության մասնագետների կողմից "Գորիս" մասնաճյուղում 22.06.2009թ.-03.07.2009թ. իրականացված նպատակային վերստուգման հաշվետվությամբ և կից նյութերով, որոնցով հիմնավորվում է, որ Հովիկ Բախշյանը, Ալինա Սարգսյանի, Գայանե Ղազարյանի, Ազնիվ Առաքելյանի, Արշակ Բալույանի, Անահիտ Թորոսյանի և Նազիկ Մաթևոսյանի օժանդակությամբ, 95 անձանց և "Պայծառ ապագա" ՍՊԸ անվամբ կազմված կեղծ վարկային գործերով վարկային գումարների և բանկի հաճախորդ կազմակերպությունների հաշիվներից դրամարկղային ելքի կեղծ օրդերներով գումարների ելքագրման և կանխիկացման միջոցով ստանալով դրանք, յուրացրել է 918,786.604 ՀՀ դրամ գումար և հափշտակության փաստը թաքցնելու, քողարկելու և կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացած եկամուտները նույն ժամանակահատվածում բանկ մուտքագրելով 496.863.500,42 « դրամ գումար, որից 232.564.938,55 դրամ՝ վարկային դրամը՝ "Որոտանի ՀԷԿ" ՓԲԸ-ի, "Գորիսի ԷՑԸ" ԲԲԸ-ի, "Զնագեզուր-95" և "Անապատ-2" արտադրական կոոպերատիվների հաշիվներին մուտքագրման մասով, իսկ 257.000 դրամ՝ "Պայծառ ապագա" ՍՊԸ-ի և "Բերրիություն" ԲԲԸ-ի անվամբ ձևակերպված երկու վարկերի միջոցով 245 մլն դրամ գումարի յուրացման փաստը քողարկելու նպատակով՝ դրանց սպասարկման մասով: "Արդշինինվեստբանկ"ՓԲԸ-ից 04.11.2009թ. առգրավված՝ ընկերության ներքին վերահսկողության վարչության մասնագետների կողմից 2007թվականից մինչև 2009 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում "Գորիս" մասնաճյուղում իրականացված թեմատիկ ստուգումների և վերստուգումների ակտերով և դրանց նյութերով, որոնցով հիմնավորվում է, որ նշված ժամանակահատվածում մասնաճյուղի կառավարիչ՝ Հովիկ

Բախշյանի և մյուսների կողմից բանկում սիստեմատիկաբար կատարվել են բանկի ներքին կանոնակարգերի, հրամանների, մասնաճյուղերի կողմից տրամադրվող վարկերի չափերի վերաբերյալ ընկերության կողմից որոշված սահմանափակումների, գրավի պայմանագրերի նոտարական վավերացման, ներկայացվող փաստաթղթերի բնօրինակների բացակայության, ստորագրությունների անհամապատասխանության և այլ բազմաթիվ խախտումներ և չարաշահումներ: Իրեղեն ապացույցների 1314.10.2009թ. և 04.03.2010թ. զննման արձանագրություններով:
Փորձագետի՝ 25.12.2009թ. թիվ 3454 եզրակացությամբ, համաձայն որի փորձաքննության ներկայացված Գյուլչորա Վանեսյանի, Վաղարշակ Սողոմոնյանի, Մ՛ելիք Զանոացի, Ռաֆիկ Ասատրյանի, Համլետ Ավանեսյանի, Վլադիմիր Մարդյանի, Աիպարիտ Մաշուրյանի, Էդիկ Հովհաննիսյանի, Միսակ Հովակիմյանի, Մերի Ավագյանի, Ռաիսա Մնացականյանի, Կարեն Միրզոյանի, Աևոն Սարգսյանի, Միսակ Մաշուրյանի, Նոնա Ծատրյանի, Զիվան Զորունցի, Աննա Օհանյանի, Վլադիկ Գասպարյանի, Անուշ Միրզոյանի, Կլավա Միրումյանի, Պատվական Ծատրյանի, Սարմիկ Զաքարյանի, Ալիկ Սարգիսջանյանի, էլյանորա Հարությունյանի, Կարեն Ասատրյանի, Խաչիկ Բաղդասարյանի, Սուրիկ Հովհաննիսյանի, Արշավիր Սուջոյանի, Արմիդա Հարությունյանի, Աշոտ Մկրտչյանի, Յաշա Օհանյանի, Վարդան Մանուչարյանի, Աբրահամ Ղազարյանի, Ռաֆիկ Հակոբյանի, էրիկ Մկրտչյանի, Շիրազ Ալեքսանյանի, Արարատ Հովսեփյանի, Աարիսա Մաթևոսյանի, Աաուրա Մինասյանի, Մայիս Ավետյանի, Գրիգոր Ստեփանյանի, Ֆրիդա Հարությունյանի, Սերյոժա Բաղդասարյանի, Մարտին Հայրյանի, Աշոտ Գրիգորյանի, Զավեն Շալունցի, Սուրեն Ամիրյանի, Սոֆյա Սալբունցի, Հակոբ Հակոբյանի Անահիկ Մանուկյանի, Զոյա Հայրապետյանի, Վարդան Մախսուդյանի,Գագիկ Մաքունցի,Կառլեն Մինասյանի, Կոլյա Մարգարյանի, Մերի Խաչյանի, Մարինե Վանյանի, Հրաչ Խաչատրյանի, Սուրիկ Բալույանի, Գագիկ Մինասյանի, Անահիտ Հակոբյանի, Ռիտա Աղաբեկյանի, Արկադի Ծատուրյանի, Սևադա Ղազարյանի, Աիլիթ Բախշյանի, Ղերենիկ Վարդազարյանի, Անահիտ Վարդազարյանի և Արմենակ Թունյանի անվամբ և Արմինե Միրզոյանի անվամբ՝ 2 վարկային գործերում առկա՝ տրանսպորտային միջոցի կոշտ գրավի,երրորդ անձի անշարժ գույքի հիփոթեքի, անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրերում նոտար Աենա Գյուլնազարյանի անունից ստորագրություններ և կլոր կնիքի դրոշմները տպագրված են համակարգչային բազմացնող գունավոր տպիչ /շիթային/ սարքի միջոցոփայսինքն կնիքի դրոշմները թողնված չեն կնիքի կողմից, այլ կեղծված են տպագրության եղանակով, իսկ հետազոտվող ստորագրությունները պատկերված են /կեղծված/ Աենա Գյուլնազարյանի կողմից կատարված մեկ ստորագրությունից: Նոտարական վավերացմամբ պայմանագրերում /բացի Վլադիկ Գասպարյանի անվամբ վարկային գործում առկա պայմանագրի/ փակցված 2992083 համարի նոտարական ակցիզային դրոշմանիշները կատարված են համակարգչային գունավոր բազմացնող սարքի միջոցով, որը չի համապատասխանում պետական ստանդարտ տպագրությանը,այսինքն ակցիզային դրոշմանիշները կեղծ են:
Վաղարշակ Սողոմոնյանի, Վարդան Մախսուդյանի, Ֆրիդա Հարությունյանի,Անահիտ Մանուկյանի, Հրաչ Խաչատրյանի, Միսակ Հովակիմյանի անվամբ վարկային գործերում տրանսպորտային միջոցի օտարման արգելանքի վերաբերյալ գրություններում եղած՝ "ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ "ՃԱՆԱՊԱՀՐԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ" ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԻՍԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ*" տեքստով կլոր կնիքի դրոշմները տպագրված են համակարգչային բազմացնող

գունավոր տպիչ /շիթային/ սարքի միջոցով, այսինքն կնիքի դրոշմները թողնված չեն կնիքի կողմից, այլ կեղծված են տպագրության եղանակով:
ՀՀ ոստիկանության "ճանապարհային ոստիկանության" ծառայության պետի՝ 11.11.2009թ. թիվ 17/7-6930 գրությունով և կից տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվական նյութերով, որով հիմնավորվում է, որ կեղծ վարկային գործերում որպես "ապառիկ կարգով գնված" և գրավի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցները՝ կամ հիմնականում ՀՀ ոստիկանության "ճանապարհային ոստիկանություն" ծառայության համակարգչային շտեմարանով ընդհանրապես չեն անցնում, կամ իրականում հաշվառված են այլ անձանց տվյալներով, կամ էլ դրանց նույնացմամբ և պետհամարանիշները հաշվառված են այլ մակնիշի ավտոմեքենաների վրա, այսինքն՝ վարկային և գրավի պայմանագրերում նշված տվյալները կեղծ են:
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կեմիտեի Գորիսի տարածքային ստորաբաժանման ղեկավարի 08.12.2009թ. գրությունով, որով հիմնավորվում է, որ կեղծ վարկային գործերում, որպես գրավի առարկա նշված անշարժ գույքերի սեփականության վկայագրերի պատճենները կեղծված են:

3. Դատարանի իրավական վերլուծությունները

Ամբաստանյալ Հովիկ Ասատուրի Բախշյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճիշտ է, որով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի:
Ամբաստանյալ Ալինա Ռաֆիկի Սարգսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-179րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:
Ամբաստանյալ Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի արարքը « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:
Ամբաստանյալ Արշակ Արտակի Բալույանի արարքը « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:
Ամբաստանյալ Գայանե ժորայի Ղազարյանի արարքը « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:
Ամբաստանյալ Անահիտ Արսենի Թորոսյանի արարքը « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:

Ամբաստանյալ Նազիկ Ղերենիկի Մաթևոսյանի արարքը « քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ մասից պետք է վերաորակել« քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մաս և նրան պատասխանատվության և պատժի ենթարկել նշված հոդվածով:

« քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: « քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

« քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն պատիժ նշանակելիս, պատժաչափը որոշելիս դատարանը հաշվի է առնում արարքի բնույթն ու հանրության համար դրա վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը, նրա պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող, ծանրացնող հանգամանքները: « քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ամբաստանյալ Հովիկ Ասատուրի Բախշյանի կատարած հանցանքը համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի դասվում է ծանր հանցանքների թվին, իսկ « քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կատարած հանցանքը Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի դասվում է առանձնապես ծանր հանցանքների թվին:

Ամբաստանյալ Ալինա Ռաֆիկի Սարգսյանի կողմից « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Ամբաստանյալ Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի կողմից « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Ամբաստանյալ Արշակ Արտակի Բալույանի կողմից « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Ամբաստանյալ Գայանե Ժորայի Ղազարյանի կողմից « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Ամբաստանյալ Անահիտ Արսենի Թորոսյանի կողմից « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Ամբաստանյալ Նազիկ Դերենիկի Մաթևոսյանի կողմից «քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը, համաձայն « քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Հովիկ Բախշյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական:

Ամբաստանյալ Հ.Բախշյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Ամբաստանյալ Բախշյանի նկատմամբ պատժաչափ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը,որ նա Գորիս քաղաքի ինքնապաշտպանական ջոկատի կազմում 1989-1992 թ.թ. մասնակցել է ՀՀ և ԱՂՀ սահմանների պաշտպանության մարտական գործողություններին:
Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Ալինա Սարգսյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Գորիսի քաղաքապետարանի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ Ա. Սարգսյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Ազնիվ Առաքելյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Գորիսի քաղաքապետարանի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ ՄԱռաքելյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Արշակ Բալույանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Խնձորեսկ համայնքի ղեկավարի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ Ա.Բալույանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Գայանե Ղազարյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Գորիսի քաղաքապետարանի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ Գ.Ղազարյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Անահիտ Թորոսյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Գորիսի քաղաքապետարանի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ Ա.Թորոսյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ամբաստանյալ Նազիկ Մաթևոսյանի պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվում այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, Գորիսի քաղաքապետարանի կողմից բնութագրվում է դրական:
Ամբաստանյալ Ն.Մաթևոսյանի պատասխանատվությունը, պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով չկա: Քննության առնելով "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ ներկայացրած քաղ.հայցը դատարանը գտնում է,որ ՀՀ քր դատ օրի 154 հոդվածի 3 մասի համաձայն քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության

նորմերին համապատասխան: ՀՀ քաղ օրի 1058 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:
Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:
ՀՀ քաղ օրի 1073 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: ՀՀ քաղ օրի 361 հոդվածի 1-ին մասի համաձայն համապարտ պատասխանատվությունը ծագում է եթե այն նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով: Փաստորեն, այն դեպքում տուժողին պատճառված վնասում ամբաստանյալների պատասխանատվության համապարտությունը նախատեսված է օրենքով, որի հիմքը նրանց կողմից համատեղ վնաս պատճառելն է:
Տուժողին ամբաստանյալների կողմից համատեղ վնաս պատճառելու փաստը հաստատվել է նրանց մեղսագրված արարքների հիմնավորմամբ և նրանց արարքի և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությամբ: Այն է վնասն առաջացել է բոլորի գործողությունների արդյունքում,՝ Հովիկ Բաշխյանի հանցագործությամբ չէր կարող առաջանալ նշված վնասը եթե Ալինա Սարգսյանն, Ազնիվ Առաքելյանն, Արշակ Գալոյանն, Գայանե Ղազարյանն Անահիտ Թորոսյանն և Նազիկ Մաթևոսյանն չկատարեին ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված արարքները:
Անդրադառնալով պատճառված ընդհանուր վնասի չափին և դրանում ամբաստանյալների պատասխանատվության համապարտության չափին, ապա դատարանը գտնում է, որ թեև այս հանցագործություններով պատճառվել է ընդհանուր 918.786.604 դրամի վնաս, այդուհանդերձ վնասն ամբողջությամբ չէ որ պատճառվել է բոլոր 7 ամբաստանյալների արարքներով /մեղքով/, այսպես 918.786.604 « դրամի վնասը պատճառվել է Հովիկ Բախշյանի, Ալինա Սարգսյանի, Գայանե Ղազարյանի հանցագործությամբ՝ մեղքով, նշված 918.786.604 դրամի վնասի մեջ 673.786.604 դրամից 796.598.046 դրամի վնասն առաջացել է բացի վերը նշված 3-ից նաև Ազնիվ Առաքելյանի, Արշակ Գալոյանի և Անահիտ Թորոսյանի հանցագործություններով՝ մեղքով փաստորեն 6 անձի համատեղ գործողություններով, իսկ 918.786.604 ՀՀ դրամի վնասում 259.188.557 դրամի վնասն առաջացել է նաև Նազիկ Մաթևոսյանի հանցագործության արդյունքում , փաստորեն 7 անձի համատեղ գործողություններով: Ուստի և պատճառված վնասի բռնագանձման համապարտությունը պետք է որոշել նշված համաչափությամբ՝ բոլոր 7 ամբաստանյալների մասնակցությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը գումարի 1/6 մասով, 6 հոգու ,մասնակցությամբ ՝ գումարի 2/6 մասով, իսկ երեք հոգու մասնակցությամբ գումարի 3/6 մասով:
Եվ նկատի ունենալով, որ 918.786.604 ՀՀ դրամ վնասից մի մասը մարվել է Հովիկ Բախշյանի կողմից,կեղծ վարկերը սպասարկելու եղանակոփիսկ 351.643.500 ՀՀ դրամն էլ հատուցվել է "Ռասկո" ապահովագրական ՍՊԸ-ի կողմից, արդյունքում պատճառված և չվերականգնված վնասը կազմել է 340.216.012 ՀՀ դրամ, դատարանը գտնում է , որ վերը նշված նույն համաչափությամբ էլ պետք է համապարտությամբ գանձվի ամբաստանյալների կողմից համատեղ պատճառված վնասը:
Ինչ վերաբերում է "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ին պատճառված 683.775.762 ՀՀ դրամ հիմնական վարկին սկսած 11.05.09թ-ից մինչև պարտավորության դադարման օրը

պայմանագրով նախատեսված պայմաններով տոկոսներ հաշվեգրելու և բռնագանձելու պահանջին, ապա հայցն այդ մասով ենթակա է բավարարման մասնակիորեն, նկատի ունենալով, որ 683.775.762 ՀՀ դրամ պատճառված վնասի 351.643,500 ՀՀ դրամի չափով քաղ հայցվորը ստացել է ապահովագրության հատուցում 03.07.09թ-ին, իսկ մնացած 340.216.012 դրամից հիմնական վարկի պարտքը կազմում է 332.132.262 ՀՀ դրամ, որին էլ ՀՀ քաղ.օր-ի 411 հոդվածի 1-ին մասի կանոնների համաձայն ենթակա է հաշվեգրման և բռնագանձման տոկոսներ ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով: Ընդ որում նշված տոկոսներն ենթակա են բռնագանձման Հովիկ Բախշյանից, նկատի ունենալով, որ նշված գումարներն ապօրինի պահվել և տնօրինվել են միայն նրա կողմից:

Ինչ վերաբերում է տոկոսները պայմանագրով նախատեսված պայմաններով բռնագանձելու պահանջին, ապա այն անհիմն է, քանի որ սույն հարաբերությունները ոչ թե պայմանագրային հարաբերություններ են, այլ հանցագործության հետևանքով ապօրինի ստացված և օգտագործված գումարների կապակցությամբ առաջացող պատասխանատվություն է հետևաբար չի կարող գործել որևէ պայմանագրային պայմաններով տոկոսներ: Քննության առնելով ,ՌԱՍԿՈե ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած քաղաքացիական հայցը, դատարանը գտնում է , որ այն պետք է թողնել առանց քննության և վերջինիս իրավունք վերապահել« Քաղաքացիական Օրենսգրքի 1021-րդ հոդվածով սահմանված կարգով սուբրոգացիայի իրավունքով քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցել:

Ելնելով քրեական օրենսդրության սկզբունքներից, սոցիալական արդարության վերականգնման և պատժի նպատակների իրականացման անհրաժեշտությունից, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հովիկ Ասատուրի Բախշյանը պետք է կրի նշանակված պատիժը:

Նկատի ունենալով, որ 19.06.2009թ. « Ազգային ժողովի կողմից ընդունվել է "Համաներում հայտարարելու մասին" որոշումը և քանի որ հանցանքը կատարվել է մինչև 01.06.2009թ, ելնելով պատժաչափից, այն պետք է կիրառվի ամբաստանյալներ Ալինա Ռաֆիկի Սարգսյանի, Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի, Արշակ Արտակի Բալույանի, Գայանե ժորայի Ղազարյանի, Անահիտ Արսենի Թորոսյանի, Նազիկ Դերենիկի Մաթևոսյանի նկատմամբ:

Հովիկ Ասատուրի Բախշյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ալինա Ռաֆիկի Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Արշակ Արտակի Բալույանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Գայանե ժորայի Ղազարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Անահիտ Արսենի Թորոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Նազիկ Ղերենիկի Մաթևոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված վարկային գործերն պետք է ոչնչացնել,դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո,իսկ փաստաթղթերը պետք է պահել գործի հետ դրա պահման ողջ ժամանակահատվածում:

4. Եզրափակիչ մաս

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով « քրեական դատավարության օրենսգրքի 357-րդ - 360-րդ, 364-րդ, 365-րդ, 369-րդ - 373-րդ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Տ

Հովիկ Ասատուրի Բախշյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի
1-ին կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավմամբ:
ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 496.863.500,42 ՀՀ դրամի բռնագրավմամբ հօգուտ պետ.բյուջեի:
ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հողվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժին մասնակիորեն գումարել ՀՀ Քրեական օրենսգրքի 179 րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժից՝ 3 տարի 6 /վեց/ ամիս և վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 9 /ինը/ տարի 6 ամիս ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 496.863.500,42 ՀՀ դրամի բռնագրավմամբ հօգուտ պետբյուջեի :
Պատժի սկիզԲԸ հաշվել 11.05.2009թ.:
Հովիկ Ասատուրի Բախշյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Հովիկ Բախշյանի անձնական, ինչպես նաև "Պայծառ ապագա" և "Բերրիություն"

ընկերությունների գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ: Ալինա Ռաֆիկի Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:
Ալինա Սարգսյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Ալինա Ռաֆիկի Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանին մեղավոր ճանաչել « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Կիրառել « Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:
Ազնիվ Առաքելյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Արշակ Արտակի Բալույանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:
Արշակ Բալույանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Արշակ Արտակի Բալույանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Գայանե ժորայի Ղազարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:
Գայանե Ղազարյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Գայանե ժորայի Ղազարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Անահիտ Արսենի Թորոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:

Անահիտ Թորոսյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Անահիտ Արսենի Թորոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Նազիկ Դերենիկի Մաթևոսյանին մեղավոր ճանաչել « քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով:
Կիրառել « Ազգային ժողովի կողմից ընդունված 19.06.2009 թվականի "Համաներում հայտարարելու մասին" որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից:
Նազիկ Մաթևոսյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչև դատավճռի կատարումը:
Նազիկ Դերենիկի Մաթևոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:
Իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված վարկային գործերն ոչնչացնել՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո,իսկ փաստաթղթերը պահել գործի հետ դրա պահման ողջ ժամանակահատվածում:
Հովիկ Բախշյանից, Ալինա Սարգսյանից, Ազնիվ Առաքելյանից, Արշակ Գալոյանից, Դայանե Ղազարյանից, Անահիտ Թորոսյանից և Նազիկ Մաթևոսյանից համապարտությամբ բռնագանձել 56.702.669 դրամ որպես հանցագործությամբ պատճառված վնաս հօգուտ Արդշինինվեստբանկ ՓԲԸ-ի:
Հովիկ Բախշյանից, Ալինա Սարգսյանից, Ազնիվ Առաքելյանից, Արշակ Գալոյանից, Գայանե Ղազարյանից, Անահիտ Թորոսյանից համապարտությամբ բռնագանձել 113.405.337 դրամ որպես հանցագործությամբ պատճառված վնաս հօգուտ Արդշինինվեստբանկ ԲԲԸ-ի:
Հովիկ Բախշյանից, Ալինա Սարգսյանից, Գայանե Ղազարյանից հօգուտ Արդշինինվեստբանկ ՓԲԸ-ի համապարտությամբ բռնագանձել 170.108.006 դրամ որպես հանցագործությամբ պատճառված վնաս :
Հովիկ Բախշյանից հօգուտ Արդշինինվեստբանկ ՓԲԸ-ի 11.05.09թ-ից մինչև պարտավորության դադարման օրը հաշվարկել և բռնագանձել տոկոսներ վարկի հիմնական գումարի՝ 332.132.262 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքով:
"ԴԱՍԿՐ." ապահովագրական ՍՊԸ-ին իրավունք վերապահել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածով սահմանված կարգով սուբրոգացիայի իրավունքով քաղաքացիական դատավարության կարով հայց հարուցել:
Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԱԹԱՆՅԱՆ